

**ՆԱԽԻՋԵՒԱՆՆ ԸՍՏ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՒԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
(1918-1920)**

ԳԱՅԻԱՆԷ ՄԱԽՄՈՒՐԵԱՆ
ggmakhm@hotmail.com

ՆԱԽԻՋԵՒԱՆԸ ՀԻՆ ԵՒ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻՆ

Նախիջեւանի գաւառը հին եւ միջին դարերում Վասպուրական Նահանգի մի մասն էր: Ամբողջ Վասպուրականը զբաղեցնում էր 40.870 քառ. կմ. տարածք՝ ձգուելով Վանայ Լիճի աւազանում գտնուող Ռշտունիքից մինչեւ Նահանգի արեւելեան ծայրամասում տեղակայուած Գողթնն ու Նախիջեւանը: Վերջինի վերաբերեալ տեղեկութիւններ կան պատմաօր Մովսէս Խորենացու, Փաւստոս Բուզանդի, այլ պատմիչների մօտ, ինչպէս եւ *Աշխարհացոյցի* թերթերում:

Վասպուրականի ականաւոր քաղաքներից էր Նախիջեւանի կենտրոն հանդիսացող Ջուղան, որը 1918-1920ին յիշատակում էր Ջուլֆա անուանումով: Այն կառուցուել է Արաքսի ձախ ափին եւ նոյնպէս յիշատակուել է Խորենացու մատեանում: Անտիկ ժամանակից արհեստների կենտրոն համարուող Ջուղան արդէն ԺԵ.-ԺԶ. դարերում հռչակում է որպէս առեւտրական խոշոր հանգոյց: Այնտեղ ապրանքափոխանակութիւնը ընդգրկում էր Թուրքիան, Պարսկաստանը, Ռուսաստանը, հասնում էր Վիեննա, Վենետիկ, Ամստերդամ, ընդհուպ Եգիպտոսի, Հնդկաստանի, Չինաստանի սահմաններ²: Այդ ժամանակ Ջուղան ունէր 40.000 բնակիչ, նրա արեւելեան ու արեւմտեան կողմերը շրջապատուած էին պարիսպով, իսկ քաղաքի աջափնեայ թաղը միջնամասին էր կապուած հսկայ մի կամրջով: Քաղաքը գեղեցկացնում էին եօթ եկեղեցի, կոկիկ ու զարդարուած տներ, քարանսարաներ, հիւրանոցներ ու փակ շուկայ: Հայկական հին գերեցմանոցը՝ հարաւային կողմում, ուշագրաւ էր իր 10.000 յայտնի խաչքարերով (Ժ.-ԺԶ. դարեր):

ԺԴ.-ԺԵ. դարերում Լենկթիմուրի եւ թուրքմէնների աւերիչ արշաւանքների, յետագայ թուրք-իրանական պատերազմների հետեւանքներով տեղի ունեցաւ ջուղայեցիների զանգուածային

արտագաղթը: Քաղաքի եւ ամբողջ Նախիջեւանի համար ամենասարսափելին 1604 թուականն էր, երբ շահ Աբբաս Ա.ի հրամանը ի կատար ածելով՝ Ջուղան այրուեց ու հիմնայատակ արուեց: Նրա բոլոր բնակիչներին՝ ընդհանուր 300.000, անհամար կորուստների գնով բռնի քշել են Իրան: Յետայսու նրանք պէտք է զարգացնէին այդ երկրի առեւտուրն ու հզորացնէին դրա տնտեսութիւնը: Աքսորեալներից 20.000 բնակեցուեցին Սպահանում, որտեղ հիմնեցին իրենց թաղամասն ու կոչեցին Նոր Ջուղա: 1667 Մայիսի 31ին Նոր Ջուղայի խոջաները առաջինն էին Ռուսաստանի պատմութեան մէջ, որոնք պայմանագիր կնքեցին ցարական արքունիքի հետ ու հիմնեցին Սպահանի Հայ Առեւտրական Ընկերութիւնը: 40 հոգանոց խումբը՝ 5 տոկոսի վճարման դիմաց, Եւրոպայի եւ Ասիայի միջեւ՝ Աստրախանից Արխանգելսկ իրականացուող տարանցիկ առեւտրի արտոնութիւն ստացաւ:

Աւելի ուշ՝ ԺԹ. դարի վերջին, 500 հոգի կարողացաւ վերադառնալ ու վերաբնակուել հայրենիքում: Հին Ջուղայի աներակները պահպանում էին 1919ին առկայ Ջուլֆայից քիչ դէպի արեւմուտք, իսկ Ջուլֆան, գտնուելով գաւառի կենտրոնից հիւսիս-արեւելք՝ 30 կմ հեռավորութեան վրայ, խճուղու եւ երկաթուղային կարելոր հանգույց էր:

1989 Դեկտեմբերին, 1998ին, 2002ին եւ 2005 Դեկտեմբերի 10-14ին արդի Ադրբեջանի ջարդարարները՝ իրենց կառավարութեան կարգադրութեամբ, բանակն ու հրետանին կիրառելով, բուլղոզըններով քանդեցին ԵՈՒՆԵՍԲՕի հաշուառման ենթարկուած համալիրն՝ Ժ.-ԺԷ. դդ. կերտած վերջին 3.700 խաչքարերը³: Նրանք ձգտում էին իսպառ ջնջել հայկական քաղաքակրթութեան վկայութիւնները Նախիջեւանում:

ԳԱԻԱՌԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԻՒՆԸ

Գաւառը՝ որպէս նոր պատմութեան ժամանակի ազգային-վարչական միաւոր, Ռուսաստանին է միացուել 1828ին, Թուրքմենչայի Պայմանագրով: Երեւանի Խանութիւնն ու Նախիջեւանի Խանութիւնը միասին (երկուսն էլ հաստատուել են 1747ին) 1828 Մարտի 21ից ձեւաւորել էին Հայկական Մարզը: Մարզի կազմալուծուելուց յետոյ Նախիջեւանն ու Երեւանը 1840 Ապրիլի 10ից դարձան Վրացա-իմերեթական Նահանգի, իսկ 1846

Դեկտեմբերի 14ից՝ Թիֆլիսի Նահանգի մի մաս: Ռուսաստանի իշխանությունը Նախիջևանը երբեք չստորադրեց Կասպիական Մարզին, Շամախու, իսկ ավելի ուշ՝ Բաքուի կամ Ելիզաբետպոլի նահանգներին: Պահպանելով ազգագրական պատկերը՝ 1849 Յունիսի 9ին Երեւանի Նահանգի ձեւաւորմանը ընդգրկուեց ամբողջ Հայկական Մարզը, այն է՝ Երեւանը, Նախիջևանն ու Ալեքսանդրապոլի Գաւառի հիմնական մասը: 1867 Դեկտեմբերի 9ին՝ հերթական վարչական փոփոխությունների ժամանակ, Նախիջևանի Գաւառը Շարուր-Դարալագեազի (Վայոց Ձորի) հետ միասին մնաց Երեւանի Նահանգում, որը Անդրկովկասի ամենախոշոր միաւորներից մէկն էր : Ներքին սահմանների՝ 1874ին ձեռնարկած վերջնական ձեւաւորման պահին Նախիջևանը կրկին ճանաչոււմ է որպէս Երեւանի Նահանգի եօթ գաւառներից մէկը⁴:

1916ի դրութեամբ բնիկ հայերը կազմում էին Նախիջևանի 131հազարանոց բնակչութեան 41,2 տոկոսը, այն է՝ 54 հազ. մարդ⁵: Շարուրի հետ միասին վերցրած՝ 211 հազար բնակչութեան 83 հազարը հայեր էին:

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴՐՍԵԻՐՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ 1917ԻՆ

Նախիջևանը, գաւառի վերոնշեալ կարգավիճակով, տեղափոխուել է 1917ի ռուսական յեղափոխությունների փուլ: Փետրուարեան բուրժուադեմոկրատական Յեղափոխութեան պայմաններում երկրամասն ու մեծ նուաճումներ ձեռք բերած կովկասեան ռազմաճակատը քիչ թէ շատ պահպանում էին իրենց կայունութիւնն ու կառավարելիութիւնը: Սակայն Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը յանգեցրեց ավելի ծանր հետեւանքների: 1917 Դեկտեմբերից սկսուել է կովկասեան ռազմաճակատում տեղակայուած ռուսական բանակի քայքայումը: 1918 Յունուարին օսմանեան զօրքերը խզել են Երզնկայում կնքուած զինադադարն ու անցել առաջխաղացման: Դա անմիջապէս ապակայունացրեց ամբողջ Անդրկովկասն ու յատկապէս Երեւանի Նահանգը: Թիֆլիսում գործող Հայոց Ազգային Խորհուրդը ճգնում էր կազմակերպել ազգային ինքնապաշտպանութիւն, իսկ նահանգի քուրդ ու թաթարական զանգուածները նենգադուլ արեցին այդ նախաձեռնութիւնը: Նրանք քանդում էին երկաթուղու հատ-

ուածներ, կտրում հեռախօսահեռագրաթելեր, թալանում ճանապարհներում, յարձակում ոչ միայն Վայոց Ձորի եւ Նախիջեւանի, այլեւ Երեւանի մօտակայքում գտնուող հայկական գիւղերի վրայ: Նրանց գումարում էին Բաշ-Նորաշէնի, Շահթախտի⁶, Ելիզաւետպոլի եւ Շամխորի մօտ Շարուրի եւ Ելիզաւետպոլի Մահմեդական Ազգային Խորհուրդների (ՄԱԽ) կազմակերպուած յարձակումները՝ զէնքերով ու նահանջող ռուս զինուորներով լի գնացքների վրայ:

1918ի Փետրուարին, հակադրուելով Անդրկովկասեան Կոմիսարիատին եւ նրա՝ հանրապետական Ռուսաստանի ու բուրժուական յեղափոխութեան հանդէպ շարունակուող հաւատարմութեանը, գաւառի ՄԱԽը Նախիջեւանի Հայոց Ազգային Խորհրդին առաջարկել է միացնել տուեալ շրջանը Պարսկաստանին: Մահմեդական ատեանը մերժումը ստանալուց յետոյ առաջարկել է հռչակել Նախիջեւանի անկախութիւնը: Սակայն հայերի վերաբերմունքը չի փոխուել՝ ո՛չ Վրաստանն ու Հայաստանը, ո՛չ էլ Թիֆլիսում կամ Գանձակում տնաւորուած թաթարների պետերը նման գաղափարներ չէին բարձրաձայնում: Բաքուն էլ պարզապէս Խորհրդային Ռուսաստանի մի մասն էր: Այդ ամէնին հակառակ Փետրուարի 22ին ՄԱԽը Նախիջեւանի քաղաքի մէջ կազմակերպել է մի խառնաժողով ու յայտարարել իրենց «անկախ խանութիւնը» կազմակերպելու մասին⁷:

Հարկ է նշել մէկ այլ ուշագրաւ իրադարձութիւն, որը տեղի է ունեցել այդ նախաձեռնութիւնից առաջ. Արեւմտեան Հայաստանում ազգային ազատագրական շարժման եռանդուն մասնակից՝ բալկանեան պատերազմներից իվեր կռուի բռնով թրծուած Ա. Թորգոմը (Արշակ Երուանդեանը) 1918 Փետրուարի 13ին Կարինում անցկացրել է զօրահանդէս ու հռչակել Հայաստանի անկախութիւնը, իսկ Կարինը (Էրզրումը) յայտարարել է նոր պետութեան մայրաքաղաք⁸: Յայտարարութեան հիմքում ազատութեան, արդարութեան եւ օրէնքի սկզբունքներն էին, վերջին քառասուն տարում ծաւալուած մշտական կոտորածների ու զանգուածային արտագաղթի միջոցներով ժողովրդի կանխամտածուած ոչնչացմանն ուղղուած՝ օսմանեան պետութեան քաղաքականութեան, յատկապէս վերջին չորս տարուայ եղեռնագործութեան աննկարագրելի տանջանքների փաստը, ինչպէս եւ հայերի աներեւակայելի տոկունութեան դրսեւորումը,

նրանց՝ համամարդկային եւ ազգային արժէքները պահելու ունակութիւնը: Երիտթուրքական իշխանութեան ամբողջ քաղաքականութիւնը անհնար էր դարձնում հայերի գոյատեւումը մէկ ընդհանուր պետութեան մէջ: Այն ատելի քան բաւարար հիմք էր տալիս Հայաստանի անկախութիւնը հռչակելու համար:

1918 Փետրուարի 13ի թուակիր Հայաստանի անկախութիւնը հռչակելու Ակտը կայացել է ամբողջ ռազմաճակատով սկսած թուրքական առաջխաղացման յաջորդ օրը: Այն հակամարտութեան մէջ էր մտնում Բրեստ-Լիտովսկում ընթացող բանակցութիւնների հետ: Ակտը երկու հնարաւորութիւն էր բացայայտում: Նրանցից մէկը պարունակում էր մշակուող պայմանագրի դրոյթների ճանաչում, ստորագրութիւն խորհրդային իշխանութեանն ու թուրքերին յանձնում Արեւմտեան Հայաստանի մէկ երրորդը՝ Արեւելեան Հայաստանի կէսի հետ միասին: Ըստ էութեան, այդ բոլոր քայլերը միեւնոյն է՝ չէին արգելում մինչեւ Բաքու ծրագրուած թուրքական ռազմարշաւն ու միմիայն ճանապարհ էր բացում նման գործողութեան համար: Միւս հնարաւորութիւնը թելադրում էր հայկական պետութեան ձեւաւորում եւ Կարինից սկսած՝ ամէնուր եւ հնարաւորինս ուժգին դիմադրութիւն ցոյց տալ: Առաջին տարբերակը նշանակում էր Արեւելեան Հայաստանի կլանումը Օսմանեան Կայսրութեան կողմից: Երկրորդը տեղափոխում էր հայերի դիմադրութիւնը նրա սահմանների ներս:

ՄԱԽԻ՝ Նախիջեւանի անկախութեան յայտարարութիւնը նման պայմաններում նշանակում էր մեծացնել Բրեստ-Լիտովսկում թուրքերին զիջուող ռազմաւարն, ու այս անգամ ոչ թէ Կարսի Մարզի, այլ՝ Երեւանի Նահանգի հաշուին: Նման նախաձեռնութիւնից վերապահ էին Գանձակի կամ Թիֆլիսի թաթար պարագլուխները: Հետեւաբար՝ այն գալիս էր օսմանեան բանակից: Թաթարների ընդհանուր անկախութեան գաղափարը հասունացաւ 1918 Մայիսի վերջին՝ որպէս Մայիսի 26ին Անդրկովկասի պատուիրակութեան նախագահին արձակած թուրքական վերջնագրի արգասիք⁹: Հաշուի առնելով իրենց բանակը Նախիջեւանի երկաթուղով Բաքու տեղափոխելու անթաքուն ձգտումը (ինչի համար թուրքերը կռիւ էին մղում Մարտ ամսից), Նախիջեւանի «անկախ խանութիւնը» ծառայում էր իշահ Թուրքիայի, եւ ոչ թէ՝ երկրամասի թաթարների: Եւ իսկապէս,

Մարտին Նախիջեանի մահմեդականները գրոհեցին ոչ թէ հիւսիսարեւելեան ուղղութեամբ՝ դէպի թաթար տարրի հիմնական բնակավայրը, այլ շարժուեցին Բայազէտի ճամփան գրաւելու: Սա անմիջապէս յանգեցրեց հայկական գիւղերի պաշարման:

Ապրիլ եւ Մայիսը յազեցած էին այս գիւղերի պաշտպանական արինալի մարտերով, իսկ 1918 Յունիսի 4ին Անդրկովկասի երեք հանրապետութիւնները օսմանեան կառավարութեան հետ կնքեցին Բաթումի Պայմանագիրը՝ նորանկախ Հայաստանի առաջին համաձայնագիրը: Այն նախատեսում էր Նախիջեան Գաւառի կորուստ՝ յօգուտ օսմանցիների եւ Գողթան ստորադասումը՝ թաթարներին:

ԱՆԴՐԱՆԻԿԸ ՆԱԽԻՋԵԱՆՈՒՄ 1918Ի ԱՄՌԱՆԸ


Հայաստանի հինաւորց այս մասը փրկելու համար զօրավար Անդրանիկ Օզանեանը այնտեղ արշաւեց իր 1400 հոգուց բաղկացած Առանձին Հարուածային Զօրամասով¹⁰ եւ նրա զինուժի խնամարկեալ 20 հազար գաղթականներով: Անդրանիկը մերժել էր Բաթումի Պայմանագիրը, քանի որ այն չէր նուազեցրել Բրեստի կորուստներն ու չէր ապահովել անվտանգութեան որեւէ երաշխիք: 1918 Յունիսի 7ին զօրավարը իր մարտիկներով գնացել է Պարսկաստան, ուր կարող էր միանալ անգլիական զօրքերին: Բայց, դրա անհնարինութեան պատճառով վերադարձել է Նախիջեան¹¹: Զօրամասն ու գաղթականները հզօրացնում էին շրջանի պաշտպանութիւնն ու բարելաւում նրա ազգագրական պատկերը, մանաւանդ, որ գաւառում սով չէր: Աւելին, թուրքական հետապնդումներից թէկուզ ժամանակաւոր ազատուելու համար զօրամասը պայթեցրել էր երկաթուղային կամուրջն ու փապուղիները, կիլոմետրերով քանդել երկաթգիծը: Այնուամենայնիւ, Յունիսի 18-20ին ու Յուլիսի 2-10ին Նախիջեանի հայութիւնը եւ իշխանութիւնները վերապահ գտնուեցին ինքնապաշտպանութեան հարցերում ու չձգտեցին իրենց մօտ տեղաւորել գաղթական զանգուածը¹²: Ինչ վերաբերում է Անդրանիկին, ապա նա ջանում էր չէզոքացնել այս շրջանի հանդէպ ցուցաբերուած թուրքական, տեղի թաթարների եւ որոշ չափով նաեւ պարսկական յաւակնութիւնները, մանաւանդ որ Հայաստանի Հանրապետութիւնը իրեն չէր հռչակել Նախիջեանի ինքնիշխան:

Իր նպատակին հասնելու համար, 1918 Յուլիսի 13ին Անդրանիկը Ապրակունիսի Ս. Կարապետ վանքում գումարեց խորհրդակցություն¹³ ՀԱԽի լիազորների հետ՝ իդէմս նրա նախագահ Կարապետ Աղայեանի, տեղի Առաջնորդ Սիոն վարդապետի եւ ՀԱԽի Ռազմական Մարմնի մասնակցութեամբ՝ ի դէմս Նախիջեանի Պաշտպանութեան Շտաբի պետ, միաժամանակ Զուլֆայի Ռազմական Խորհրդի նախագահ եւ Զուլֆայի կայազօրի պետ Երուանդ Խարազեանի, Գողթնում ՀԱԽի լիազօր եւ Ագուլիսի քաղաքագլուխ Արտաւազդ Մարտիրոսեանի:

Յաջորդ օրը՝ Յուլիսի 14ին, նրանք հրապարակում են համատեղ ծրագիր: Դրան համաձայն՝ 1) Անդրանիկը իր զօրամասը ենթարկում էր Ռուսաստանի կենտրոնական կառավարութեանը, 2) հիմք ընդունելով Բրեստի Պայմանագիրը՝ Նախիջեանը հռչակում էր Ռուսաստանի անքակտելի մաս, 3) բնակիչները, անկախ ազգային պատկանելիութիւնից, յանձնում էին բոլոր զէնքերը, 4) շրջանում մտցւում էր ռազմական դրութիւն՝ Անդրանիկի հրամանատարութեան ներքոյ: Նոյն օրը Զօրամասի Յրդ. գումարտակի հրամանատար կապիտան Խ. Բոնապարտեանը Բաքու է հեռագրել բոլշեւիկների Կովկասի հարցերով արտակարգ կոմիսար Ստեփան Շահումեանին: Այդ տեղականքով զօրավարը խնդրել է յայտնել Մոսկուայի իշխանութեանը նրա զօրաբաժնին Ռուսաստանի կենտրոնական իշխանութիւնների կարգադրութիւններին ենթարկուելու մասին: Նա խոստանում էր խոչընդոտել թուրքական զօրքերի մտնելը Նախիջեան ու հայցում էր յետագայ հրահանգներ¹⁴:

1918 Յուլիսի 16ին Հարուածային Զօրամասը յաջողութեամբ զինաթափեց Եայճի Գիւղը, իսկ ՄԱԽը օգնութիւն հայցեց Շահթախտում տեղակայուած օսմանեան զինուժի շտաբից: Յուլիսի 18-19ին Նախիջեան քաղաքին են մօտենում օսմանեան երկու գունդ՝ 9 թնդանօթներով ու 16 գնդացիներով զինուած: 400 պաշտպանների դէմ վարած յամառ մարտում թուրքերը ամսի 19ի երեկոյեան գրաւում են քաղաքը: Կռիւներից՝ գաւառի կենտրոնի հետ կործանուել էր նաեւ Զուլֆան: Յուլիսի 20ին Անդրանիկի Հարուածային Զօրամասը եւ նրանից անբաժան այժմ 35000 փախստականները (տեղի բնակիչները ներառեալ), հեռացան Գողթնի ուղղութեամբ: Այն գիւղացիները, որոնք ողջունում էին զաւթիչներին ու զէնք յանձնում, Աստապատի 2500 բնակիչների

նման - ինչպես եւ գաւառանիստ նախիջեանցիները - ենթարկուեցին կոտորածի, նրանց տները թալանուեցին, իսկ մարդկանց տանջեցին ամենադաժան կերպով: Գողթն հասնելուն պես Անդրանիկը ընդունել է Ագուլիսից ուղարկած պատուիրակութեանը, որը նրան հաղորդել է օրդուբադցիների խնդրանքը՝ չմտնել իրենց քաղաքն ու սարերի վրայով տեղափոխուել Զանգեզուր: Խնդրողները չէին ուզում «սադրել» թուրքերը, թէւ վերջինները ինքնուրոյն կերպով մշակում էին իրենց զաւթողական ծրագրերը:



Ի վերջոյ, օսմանեան բանակը Վերին Ազա գիւղի մօտ հայերի յամառ դիմադրութիւնը յաղթահարելուց յետոյ 1918 Օգոստոսի 8ին մտաւ Օրդուբադ: Թէեւ Գողթան հարաւային մասը հսկւում էր զաւթիչների գէնքով, նրա հիւսիսային ու լեռնոտ կողմը՝ Բիստ, Ալահի, Մորուանիս, Փառակա, Ռամիս գիւղերով հանդերձ մնացել է ազատ: Ու թէեւ Խալիլ Բէյն ու նրա ընտանիքը մինչեւ Հոկտեմբերի վերջը բնակւում էին Գողթան կենտրոն Օրդուբադում, իսկ Օգոստոսի 23ին թուրքերը ձեռնարկել էին նոր լայնածաւալ յարձակում, նրանք, այնուամենայնիւ, չկարողացան գրաւել այդ տեղամասն ամբողջութեամբ: Սակայն, այս փոքր բացառութեամբ հանդերձ՝ Յուլիս-Օգոստոս ամիսներին հայկական բնակչութիւնը ամբողջապէս դուրս քշուեց Նախիջեանից: Ելնելով ՀՀ Խնամատարութեան, Վերաշինութեան եւ Աշխատանքի

Մինիստրության տուեալներից, գաւառի 38500 բնիկներից 34500 հայեր բռնել են փախուստի ցուպը հետեւեալ ուղղութիւններով.- 13000՝ Զանգեզուր, 8000՝ Երեւան, 7500՝ Նոր Բայազէտ ու 5000՝ Թիֆլիս: Նրանցից համարեա 15000ը մեռել էին մինչեւ 1919ի գարնան աւարտը¹⁵:

Անդրանիկի հեռագիրը Մոսկուայից քաղաքական արձագանգ չի ստացել ու չի ուղեկցուել բոլշեւիկների ռազմական օժանդակութեամբ: Այնինչ՝ 1918 Ապրիլի 6ի վիճակով Անդրանիկը Ալեքսանդրապոլում զգուշացրել է Հայկական Կորպուսի հրամանատար, զօրավար-լէյտենանտ Թովմաս Նազարբէկեանին, թէ թշնամու գլխաւոր թիրախը գտնուում է Կասպից տարածաշրջանում՝ Բրեստ-Լիտովսկի եւ Բաթումի պայմանագրերով նախատեսուած սահմաններից շատ հեռու¹⁶:

ՆԱԽԻՋԵԻԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱԽԱՐՏԻՅ ՅԵՏՈՅ

Նախիջեւանի ծանրագոյն ռազմագրաւումը չի աւարտուել Օսմանեան Թուրքիայի՝ Առաջին Աշխարհամարտում ջախջախման հետ միասին: Կայսրութիւնը միտք չունէր կատարել Մուդրոսի Զինադադարն ու 1914ի ռուս-թուրքական սահմանին ետ քաշել 47,000 ասկերներին: 1919 Յունուարի 17-18ին Կարսում հաւաքուել է հարիւրից աւելի մարտատենչ ամբոխ, որն յայտարարել է «Հարաւարեւմտեան կովկասեան հանրապետութեան»¹⁷ գոյացման մասին: Այդ շրջանը դիտուում էր որպէս ինքնավար միաւոր՝ օսմանեան դրօշով ու զինանշանով, որտեղ պաշտօնական լեզուն սահմանուել էր թուրքերէնը: «Ինքնավարութիւնը» տեղեակ է պահել հանրութեանը իր նկրտումների մասին՝ Բաթումից մինչեւ Նախիջեւան ձգուող բոլոր հողերի նկատմամբ: Հաւաքի պարագլուխները դէմ էին արեւմտահայ նահանգների անջատման Օսմանեան Կայսրութիւնից, եւ պատրաստ էին բնաջնջել ամբողջ հայութեանը իրենց յօրինուած «սահմանների» ներսում: Խառնաժողովի ղեկավարներն ու կազմակերպիչները՝ Էսադ Օքտայը, Սերուէտ բէկ Ահաբէկովը, Ջհանգիր զադէ Իբրահիմ բէյը, Ասադ բէկ Հաջիւը, խոստանալով նոր ռազմական գործողութիւններ սկսել Անտանտի տէրութիւնների դէմ, հեռագրեր են յղել յաղթանակած երկրների կառավարութիւններին՝ պարզորոշ յայտնելով իրենց տեսակէտը:

Անգլիացիները համաձայն չէին նման մօտեցմանը. չէ՞ որ

արեւմտեան Անդրկովկասը հսկող նրանց զօրքերի հրամանատար Զ. Տ. Ֆորեստիէ-Ուոկըրը, 1919 Յունուարի 7ին ընդունելով օսմանեան 9րդ բանակի հրամանատար Շեքի փաշային, նրան յուշագիր յանձնեց ու հրամայեց մինչեւ ընթացիկ ամսուայ վերջը մինչպատերազմեան սահմանից ետ քաշել ամբողջ զինուած համակազմը¹⁸: Անգլիացիները սկսում են համալրել իրենց ստորաբաժանումները երկրամասում: Այնուհետեւ Ֆորեստիէ-Ուոկըրը միջամտում է ՀՀ բանակի եւ Շարուր-Նախիջեւանի 10հազարանոց մահմեդական ջոկատի միջեւ կապած զինադադարին¹⁹, որով ապահովում էր փախստականների տունդարձը, ինչին խոչընդոտում էին զինեալ մահմեդականները: Բրիտանական առաքելութեան սպաները, բանակցելով երկու կողմերի հետ, Յունուարի 26ին ստեղծեցին իրենց ռազմական նահանգապետութիւնը՝ կապիտան Ֆ. Լաուտոնի գլխավորութեամբ: Ամսի 29ին բրիտանական առաջին վաշտը մտաւ Նախիջեւան: Փետրուարի 10ի դրութեամբ Հայաստանի Հանրապետութեան բանակը նահանջեց դէպի Արարատ (Դաւալու) եւ Վեդի գետից հիւսիս՝ դէպի հին Արտաշատ (Ղամարլու²⁰): Ամբողջութեամբ վերցրած՝ անգլիացիները 800 զինուոր են տեղաւորել գաւառով մէկ:

Նրանց ուժգին, անմիջական ճնշման ներքոյ 1919 Մարտի 15ին վերջին ասկեարները թողել են Արեւելեան Հայաստանը: Սակայն գարնանը իյայտ է գալիս մի նոր երեւոյթ՝ թուրքերի ռազմագրաւումը փոխարինում էր թաթարական դիմադրութեան կազմակերպմամբ: Նախիջեւան ժամանեցին Բաքուի ներկայացուցիչ Սամէդ քէյն ու թուրք գնդապետ Խալիլը: Նահանգապետ Լաուտոնը հակուած էր գործակցելու մահմեդականների հետ, սակայն ստիպուած էր բողոքել Թիֆլիս՝ թաթարների անհնազանդ վարքից: Հետեւաբար՝ նրան փոխարինում է գնդապետ Զ. Սիմպսոնը: Անգլիացիները շարունակ համալրում են իրենց ուժերն Անդրկովկասում, բայց Ապրիլի 2-3ին նրանց քաղաքականութիւնը բեկում ապրեց. Դաշնակիցների Կ.Պոլսում ու երկրամասում առկայ հրամանատարութիւնն իր համաձայնութիւնն է տալիս ՀՀին յանձնել մինչեւ Զուլֆա ձգուող երկաթգիծն ու վերաբնակեցնել Երեւանից հարաւ տնաւորուած մահմեդականներին: Նրանք պէտք է տեղափոխուէին Շարուր-Նախիջեւան: Սակայն այդ քայլի հետ մէկտեղ, երկրամասի

բրիտանական շտաբը Թիֆլիսից Փարիզ էր ուղարկում քարտեզներ, որոնք վկայում էին Շարուրի, Նախիջեանի, Ջանգեզուրի՝ Հայաստանի մաս լինելու մասին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՒ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

1919 Ապրիլի 4ին գորավար Բ. Մ. Դեուին, որպես 27րդ դիվիզիայի հարաւային թելի հրամանատար, գործուղուել է ՀՀ մայրաքաղաք: Նրա լիազօրութեան շրջանակներում էին Երեւանը, Կարսն ու Նախիջեանը: Զօրավարին տրուած հրահանգներում նշուել էր. «*Նախիջեանի շրջանը յանձնուելու է հայկական կառավարութեան վարման մինչեւ Հաշտութեան Կոնֆերանսի կարգաւորումը*²¹»: Ապրիլի 19ին ՀՀին է յանձնուել վարչական իրաւասութիւնը Կարսում: Այնուհետեւ հեռանալու պատրաստ անգլիական բանակն անցել է փախստականների հայրենադարձութեան եւ Նախիջեանում հայկական վարչակազմի վերականգնման խնդիրներին: Այդ քայլերը հակասում են մեր յաճախակի պնդումներին, թէ Մեծ Բրիտանիան մշտապէս թշնամական է հայերի հանդէպ մեր հաւասարապէս մշտական ուսական կողմնորոշման պատճառով: Երկու կարեւոր հարցերի առնչութեամբ Անգլիան չի գերադասել մեր մրցակիցներին՝ Կովկասի թաթարներին, վերջինների թրքամէտութեամբ հանդերձ:

Նախիջեանին ու Կարսին վերաբերող որոշումները ցոյց են տալիս, որ մեր նախկին մեկնաբանութիւնները հակասում են քաղաքական թէկուզ հազուադէպ, բայց կարեւոր իրողութիւններին: Բրիտանացիք բոլորովին չէին շփոթում հայերի՝ Ռուսաստանի հանդէպ դրական այն վերաբերմունքի առնչութեամբ, որն այն պահին մնում էր իր սովորական շրջանակներում:

Հասկանալի է, ցանկացած կողմնորոշում վկայում է նրա կրողների տկարութեան մասին: Նրանց ուժերը չեն պատում սեփական ժողովրդի ֆիզիկական անվտանգութիւնը ապահովելու համար: Կողմնորոշումը տարբեր է բարեկամութիւնից, ռազմատնտեսական կամ քաղաքական համագործակցութիւնից՝ թէկուզ կրտսեր թիմակիցների դերում: Կողմնորոշումը պարունակում է պաշտպանողների, հովանաւորողների փնտռտուք՝ դրանից բխող հասարակական-քաղաքական կախումաւորութեամբ հանդերձ: Սակայն 1917-1919ին Ռուսաստանը յեղափոխութեան

թոհուրոհում էր, այսինքն՝ պատուած էր արինալի եւ կործանիչ քաղաքացիական պատերազմով: Նա չէր կարող պաշտպանել Անդրկովկասը, անգամ նոր գաղափարները որդեգրած Խորհրդային Բաքուի այն հայերին, որոնք այդքան հեռու էին գտնուում Բրեստ-Լիտովսկում նախատեսուած սահմաններից: Հետեւաբար ռուսական քաղաքական կողմնորոշումը իրականում անհնար է եղել, իսկ Բրիտանիայի հետ ունեցած համագործակցութիւնը կախուած էր Անդրկովկասում նրա ռազմական ներուժից միայն²²:

Բրիտանական զօրքի դուրս բերման նախապատրաստական փուլում Կարսի կայունացումն ու երեւանամերձ մահմեդական Զանգիբասարը²³ ՀՀին ստորադրելը, Նախիջեւանում ազգային վարչակարգի ամրապնդումն ու քուրդ, թաթար բնակիչների հետ համագործակցութիւնը խաղաղութիւն ու քաղաքական կայունութիւն էին բերում, ազդարարում հայերի անկախութեան կայացած լինելը: Ի պատասխան՝ օսմանեան բարձր ղեկավարութիւնը, փաստերը աղաւաղելու եւ հայկական պետութեան առաջացման առթիւ իր դերը գովելու սովորութեամբ հանդերձ, Նախիջեւան է գործուղել Խալիլին՝ նրան նշանակելով գաւառի մահմեդական ջոկատների շտաբի պետ: Նրան ուժեղացրին փողով, ռազմամթերքով ու մօտ 3000 զինձառայողներով՝ Բայազէտում տեղակայուած Կովկասեան հետեւակային 11րդ դիվիզիայի շարքերից: Աւելին՝ տեղական բնակչութեանը պարտադրել են ռազմական վարժանք, իսկ պատերազմին մասնակցելու դժկամ գիւղերը՝ ճնշուել²⁴:

Դէռին 1919 Մայիսի 3ին, Դ. Կանայեանի հետ ստորագրում է հրաման Նախիջեւանի շրջանի ազգաբնակչութեան, այստեղ հայկական վարչութիւնը հաստատելու մասին: Նահանգապետի պաշտօնը ստանձնում էր Գէորգ Պետրոսի Վարշամեանը, շրջանը բաժանում երեքի՝ Գողթնը (Օրդուբադ) իր Ագուլիս կենտրոնով, Նախիջեւանը՝ համանուն քաղաքի կենտրոնով, ու Շարուրը՝ Նորաշէնի կենտրոնով: Մայիսի 14ին Վարշամեանը ժամանեց գաւառ, ՀՀ վարչապետ Ալեքսանդր Խատիսեանի ու Դէռիի ուղեկցութեամբ: Ժամանման յաջորդ օրը նրանք եկել են Զուլֆա, իսկ բրիտանացի ռազմական նահանգապետ գնդապետ Սիմպսոնին փոխարինել է կայսերական ռազմական առաքելութեան պետ, կապիտանի պաշտօնակատար Ֆ. Լ.

Շուկինդը: Ամսի 16ին ՀՀ Վարչապետը մասնակցել է ՄԱԽի նիստին:

Մայիսի 18ին Խատիսեանը վերադարձել է Երեւան: Նրա գնալուց յետոյ գաւառ են եկել զօրավար մայոր Գ. Հ. Շելկովնիկեանի առաջին հայ զինուորները 2000 հետեւակի հասնող ընդհանուր կայազօրից²⁵: Զոկատը լրացնում էին 4 դաշտային թնդանօթ ու 4 հեծեալ վաշտ, այդ թւում՝ Սասունի հեծելավաշտը Մուշեղ Աւետիսեանի գլխաւորութեամբ: Բրիտանական զօրքերի հարիւրեակները տեղաբաշխուել են վճռող դիրքերի՝ Դաւալու, Սադարակ, Եայճի եւ Զահրի գիւղերի վրայ: Լրացուցիչ հնդկական ստորաբաժանումները՝ ռաջպուտների շուրջ 2 վաշտ, մնացին գաւառի կենտրոնում մինչեւ Բրիտանիայի ուժերի լիակատար դուրսբերումը Նախիջեւանից Յուլիսի 7ին: Յուլիսի 1ից, օգտուելով բրիտանական բանակի բացակայութիւնից, թաթարները սկսել են իրենց յարձակումները Վեդիի մօտ: Յուլիսի 20-25ին նրանք կատաղի հակամարտութիւն նախաձեռնեցին ամբողջ Նախիջեւանով մէկ: Նրանց գործողութիւնները թուրք սպաների ղեկավարութեամբ էին կատարուում: Էրզրումից Խալիլ Բէյին տրամադրել էին հրետանու մասնագէտներից սկսած՝ 30 սպաներ: Նոյն նպատակներին հասնելու համար Բաքուն տրամադրել էր 25 մլն. ռուսական կայսերական ռուբլի եւ սպայակազմ²⁶:

ՀՀ բանակը ծանր ու դաժան կռիւներից յետոյ հարկադրուած էր նահանջել, իսկ թուրք-թաթարական ելուզակները, քարուքանդ անելով 45 գիւղ, անխտիր սպանեցին 10-12,000 մարդ²⁷, ներառեալ՝ Նախիջեւան քաղաքում գործող ամերիկեան հիւանդանոցի վիրաւոր ու հիւանդ անձինք: Այդ ամէնի մասին վկայում էին Յուլիսի 28ին Պարսկաստան փախուստ տուած անգլիացիներն²⁸ ու յատկապէս Ամերիկեան Նպաստամատոյցի աշխատակիցները, որոնք ահաւոր թուով գլխատած ու այլանդակուած դիակներ են տեսել Արաքսում՝ Զուղայի կամրջի մօտ: Գետի բոլոր վտակները փակ են եղել մարդկանց մարմիններով: Ամերիկեան հիմնարկներն ու պահեստները շրջանով մէկ թալանուած ու կործանուած էին:

Օգոստոսի 1ին բրիտանացիք ու ֆրանսիացիները անմիջական բանակցութիւնների մէջ են մտել Խալիլի հետ Բաշ Նորաշէնում: Նոյն ամսի կէսին Երեւանում դաշնակիցների զինուորական

ներկայացուցիչներ փոխգնդապետ Ջ. Չ. Պլաուդընն ու գլխապետ (կապիտան) Ա. Պուադեբարը, մայոր Ս. Չ. Ֆորբսը եւ Ք. Դ. Աշրը՝ Ամերիկեան Նպաստամատուցից, միասին մեկնել են Նախիջեան՝ երկաթուղային երթեւեկութիւնը մինչ Զուլֆա վերականգնելու համար։ Նրանք ցնցուած վերադարձել են Երեւան, երբ երեք օր շարունակ Խալիլ բէյը բանակցութիւնների փոխարէն նրանց ստորացրել է, բռնութիւն կիրառել ու ձերբակալել։ Նա մերժել է ամերիկեան ունեցուածքը վերադարձնելու պահանջը, իսկ գաւառի բոլոր կարեւոր քաղաքներում, գիւղերում տեղակայել էին թուրք սպաներ ու զինուորներ, որոնք զանգուածաբար համալրում էին Բայազէտից Մակուի վրայով ժամանող համակազմով²⁹։ Այժմ հայկական վարչութիւնը բացակայում էր Զուլֆայից Դաւալու ձգուող տարածքում։ Այստեղ ողջ էին մնացել ընդամենը միքանի հարիւր հայ։ Ինչպէս պարզուել է Ամերիկոմի անդամներ Աշրի եւ Ք. Այլրի՝ Սեպտեմբերի 17-26ին Նախիջեան իրականացրած տեսչական շրջագայութիւնից, վերապրողների թիւը նուազել էր մեծապէս, իսկ նրանց վիճակը սարսափելի էր։ «Աղորբեջանում թոյլ չեն տայ ապրել թէկուզ մէկ հայի»՝ Սեպտեմբերի 19ին նրանց յայտարարել էր տեղական հրոսակների շտաբի պետ Քերբալա խանը։ Իսկ Խալիլը սպառնացել էր այնպիսի նոր կոտորած սկսել, որ Յուլիսինը դրա համեմատ մանկական խաղ թուայ³⁰։

Յուլիսեան պատերազմից յետոյ Սամէդ բէյ Զամալինսկին ստանձնեց Նախիջեանի ընդհանուր-նահանգապետի պաշտօնը, իսկ Խալիլ բէյը դարձաւ նրա գորքերի հրամանատար։ Վերջինս թուրքական օժանդակութիւն էր խոստացել Զանգեզուրի գրաման համար ու նոր սպաներ խնդրել Էրզրումից³¹։ Հարկաւոր է նկատի ունենալ 1919ի արինալի եւ անգութ ազգամիջեան կռուից սկիզբ արած ալիքածել տեղաշարժի երեւոյթը. Շարուրի, Երեւանի շրջակայքի կամ Զանգեզուրի թաթարները փախչում էին Նախիջեան, իսկ այդ շրջանի հայերին վտարում էին Սեւան եւ Զանգեզուր։

Նախիջեանում թուրքերի նպատակին հասնելուց յետոյ վտանգուել էր ՀՀ պետական կայունութիւնն եւ համապարփակ խաղաղութիւնը։ Այժմ թուրք եւ թաթար համատեղ ուժերը իրենց զաւթողական քաղաքականութիւնը տարածել էին Զանգեզուրի վրայ։ Ընդ որում, գրաւելու ենթակայ կարեւոր ուղղութիւնները եւ կէտերը ընտրւում էին՝ ելնելով միայն նրանց ռազմական նշանակութիւնից։

ՈՒՒԼԻԺՄ ՀԱՍԿԸԼԻ ԾՐԱԳԻՐԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ
ՆԱՀԱՆԳԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

1919 Օգոստոսի 21-23ին Հայաստանի հարցերով Դաշնակիցների Գերագոյն Յանձնակատար ԱՄՆի բանակի գնդապետ Ուիլիլմ Ն. Հասկըլը ժամանեց Երեւան³², Օգոստոսի 28ին մեկնեց Բաքու եւ առաջարկեց ստեղծել չէզոք գոտի՝ ամերիկեան հսկողութեամբ: Օգոստոսի 29ին Ադրբեջանի վարչապետը համաձայնել է եւ «ուղղումներ» մտցրել նրան առաջարկուած նախագծին: Յետագայ խորհրդակցութիւնների ժամանակ հիմնական բանավէճը ծաւալուել է Դարալագեազի, Բաքուից մինչեւ Զուլա կառուցուելիք երկաթգծի եւ ամերիկեան նահանգապետի լիազօրութիւնների հարցերի շուրջ: Նոր մտադրուած երկաթուղին ցանկանում էին անցկացնել Զանգեզուրի հարաւային գոտով: Ադրբեջանի իշխանութիւնները երկու հնարք կիրառեցին, երբ խօսում էին Հասկըլի հետ:

Առաջին.- նրանք սկզբից բանակցեցին թաթարական մեծամասնութիւնը պարունակող, ինքնորոշուած ու Բաքուին միացած Նախիջեւանի անունից: Այնուհետեւ ջանացին ընդլայնել այդ շրջանը՝ բացարձակապէս անվիճելի ու Երեւանի կողմից ամբօրէն հսկուող Դարալագեազի հաշուին: Ու թէպէտ Դարալագեազը չի գրաւուել օսմանեան բանակի՝ նոյնիսկ 1918ի արշաւի ժամանակ, յաջորդ քայլով մուսաւաթ ղեկավարները «փոխարինում» էին այդ շրջանը այժմ նրանց հարուածի տակ դրած Զանգեզուրից ՀՀ զօրքերը դուրս բերելու հետ: Նահանջի դիմաց խոստանում էին «հանդարտեցնել» Երեւանամերձ եւ ապագայ ընդհանուր-նահանգապետութեան մէջ տնաւորուած մահմեդականներին: Հասկըլի ծրագրով ու ՀՀի համաձայնութեամբ Նախիջեւանը պէտք է դառնար ընդհանուր-նահանգապետութիւն, իսկ Ադրբեջանի մեկնաբանութեամբ՝ «չէզոք գոտի»:

Երկրորդ.- թաթարները իրենց են վերագրել ազգերի ինքնորոշման մենաշնորհը: Հայերին վայրագօրէն կոտորելով Նախիջեւանում, նրանց դուրս քշելով իրենց օջախներից, գողանալով ուրիշի բերքը, հարստութիւնն ու հողը՝ թուրք-ադրբեջանական դաշինքը անմիջապէս պահանջում էր օրինականացնել իր աւազակութիւնը՝ ելնելով ժողովրդավարութեան հիմնադրոյթ արժէքներից: Թուրքերի եւ ադրբեջանցիների իւրաքանչիւր խոշոր յարձակում սկսում էր

ապագայ զոհին հասցեագրած մեղադրանքներով: Զոհին վերագրելով սեփական գործողությունները՝ զաւթիչը «հաւասարութեան նշան» էր դնում իր եւ միւս կողմի միջեւ: Նշանակում է՝ նա ի չիք էր դարձնում յարձակման փաստն ու ժխտում նրա զոհի մարդկային արժէքը կամ ցանկացած իրաւունքը՝ դրա անվգտանգութեան եւ անգամ կեանքի հնարաւորութիւնը:

Յատկանշանական է թուրքական եւ ադրբեջանական ընտրելու ունակութիւնը, երբ խօսքը եւրոպական քաղաքական գաղափարների կամ իրաւակարգի մասին է: Երկու դէպքերում էլ արտերկրից ներմուծուող ուսմունքը երբեւիցէ չի ընդունուել ամբողջութեամբ: Այն ծառայեցնում են միմիայն շահաւետութեան ու յարմարութեան տեսանկիւնից: Նոյնանման ընտրութիւնը առկայ է այլ հարցերում եւս: Օրինակ Զանգեզուրից, Շարուրից, Երեւանի մերձակայքից փախած թաթարները միտումնաւոր ուղարկում էին ոչ թէ արեւելք, այլ Նախիջեւան, ուր արհեստաբար ուժեղացնում էին նրանց տոկոսային մեծամասնութիւնը: Նոր զանգուածը բերում էին հայկական գիւղեր ու գէնք տալիս: Շրջանի թաթար նորաբնակները բոլորովին միտք չունէին վերադարձնելու թալանը իսկական տէրերին: Այժմ այդ տարրերը յարմար էին հայկական Զանգեզուրի վրայ երկու կողմից յարձակում սկսելու համար: Նման տրամադրութիւններ նկատելի էին նաեւ Բայազէտում տեղակայուած Զաւիդ բէյի թուրքական Կովկասեան 11րդ դիւիզիայի կարելոր դերի առնչութեամբ³³:

Խատիսեանի, Ռուբէն Տէր Մինասեանի, Հասկըլի հետ Սեպտեմբերի 6-14ին Նախիջեւանի շուրջ Թիֆլիսում ընթացած բանակցութիւնների ժամանակ այս շրջանի եւ Հայաստանի հարաւային այլ մասերի թաթար պատգամաւորները իրենց անուանակոչեցին «Հարաւարեւմտեան Ադրբեջանի» ներկայացուցիչներ ու յուշագիր յանձնեցին ամերիկացուն³⁴: Նրանք խնդրում էին չհեռացնել Բաքուի իշխանութիւնը բազմաթիւ հայկական շրջաններից: Բաքուի ղեկավարութիւնը եւս Դաշնակիցներին է յղել ՀՀի դէմ ուղղուած մեղադրական ռադիօգրեր:

Երեւանի իշխանութիւնները իրենց պատասխան յայտարարութեամբ նկարագրել են թուրք ու թաթար գործակալների գործունէութիւնը Հայաստանում³⁵: Նշում էին, ի

միջի այլոց Մուդրոսի զինադադարից մինչև Նախիջևանի նահանգապետության առթիւ պայմանաւորութեան, այնուհետեւ 1919 Նոյեմբերի 23ի երկկողմանի պայմանագրի բոլոր պարտականութիւնների զանցառումը:

Սեպտեմբերեան գործուղումից յետոյ վարչապետ Խատիսեանն ու Տէր Մինասեանը տուն են բերել Հասկըլի 9 կէտից բաղկացած մի ծրագիր, որտեղ դաշնակիցների գերագոյն յանձնակատարը հաստատում էր Զանգեզուրի եւ Դարալագեազի՝ Հայաստանին պատկանելութեան փաստը: Ծրագիրը վաւերացրել էր «Ամերիկեան ընդհանուր-նահանգապետութիւն» եզրոյթը եւ ընդունեց երկաթուղին կառուցելու նախագիծը որպէս ՀՀ եւ ԱՀի միջեւ առանձին համաձայնագրի առարկայ: Ճիշտ է, հողային թուացեալ «զիջումների» դիմաց Բաքուն պահանջեց նրան յանձնել Գողթնը (Օրդուբադը՝ հինաւորց Որդուատը): Այս տեղամասը ցանկանում էին անջատել նահանգապետութիւնից ու հնազանդեցնել Ադրբեջանին: Հասկըլի մերժումից յետոյ, Հոկտեմբերի 6ին արտգործնախարար Մ. Զաֆարովը ադրբեջանական կառավարութեան անունից նրան յայտնեց ամերիկեան նահանգապետութիւնը ընդունելու մասին: Իրականում Բաքուի իշխանութիւնները գերադասել են չսրել անմիջական յարաբերութիւններն եւ իրենց դիմադրութիւնը տեղափոխել աւելի ցածր՝ զանգուածային շերտի:

Պաշտօնական վաւերագիրը ձեռքին՝ Հասկըլը նոյն ամսի 7ին մեկնել է Փարիզ, որպէսզի այնտեղ հայցի զօրքերի յատկացում եւ իր լիազօրութիւնների ընդլայնում ամբողջ Անդրկովկասի վրայ: Նրա շտաբի պետը՝ Գերագոյն Յանձնակատարի պաշտօնատար գնդապետ Զ. Ռիան, պէտք է հաստատէր իր հայրենակցին գնդապետ Է. Լ. Դելիին ընդհանուր նահանգապետի պաշտօնում: Գործը իկատար ածելու նպատակով նա ժամանել է Երեւան ու 1919 Հոկտեմբերի 23ին՝ Հասկըլի անունից, իշխանութիւններին դէմ տուել Յայտարարութիւն՝ «Շարուր-Նախիջևանի ամերիկեան նահանգապետութիւնը ստեղծելու մասին»³⁶: Վաւերագրում նշում էր, որ երկու հանրապետութիւնները «համաձայնել են հաւատարմութեամբ սատարել» նոր վարչակարգին՝ հաշուի առնելով տուեալ որոշումը «հայկական եւ ադրբեջանական կառավարութիւնների համաձայնութեամբ եւ աջակցութեամբ» կայացնելու իրողութիւնը³⁷:

Հոկտեմբերի 24ին ԱՄՆի բանակի շտաբի հինգ սպաներ, Ռիան եւ Դելին Երեւանից տեղափոխուել են շրջանի կենտրոն, որտեղ նրանց դիմաւորել են թուրքական եւ ադրբեջանական դրոշներով: Տեղի պարագլուխները հիւրերին ուղարկել են ՄԱԽ, իսկ Խալիլ Բէյը յայտարարել է, թէ ինքը թոյլ չի տայ հաստատել հսկողութեան նման գօտի: Խալիլը ինքնուրոյն էր այնտեղ ապահովում կարգ ու կանոն, ուստի Դելին կարող էր հանդիսանալ լոկ Փարիզի Կոնֆերանսի ներկայացուցիչ: Երկու օրում ամերիկացիները երկու անգամ հրապարակաւ ընթերցել են յայտարարութիւնը եւ ապարդիւն ճգնել հրատարակել այն: ՄԱԽի անդամները պնդում էին իրենց տեսակէտի վրայ, անգամ եթէ Բաքուից ենթարկուելու հրաման գար: Այսպէս, Հոկտեմբերի 29ին Ռիան վերադարձել է Երեւան, իսկ Դելին մնացել է նպաստներ բաշխելու եւ բարոյական ազդեցութիւն գործելու համար: Հինգ սպաներից մէկը՝ փոխգնդապետ Զ. Շելին գործուղուել է Դաւալու եւ ստանձնել զինադարարի կատարման գծով հսկիչի դերը:

Հասկըլի ծրագիրը տապալելուց յետոյ տեղական ուժերը անմիջապէս անցան Դելիի հետ յարաբերութիւնների լաւացման³⁸:

ՄԱՐՏԵՐ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ, ԳՈՂԹՆԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Միեւնոյն ժամանակ Նախիջեւանում տնաւորուած զինուժը անցել է Զանգեզուրի վրայ երկու կողմից լայնածաւալ յարձակման: Նպատակադրուելով բացել գաւառի կենտրոնական մասը տանող լեռնանցքները՝ թուրք սպաների հրամանով շարժուող զօրասիւնները ճգնեցին գրաւել Լեռնային Գողթնը: Սակայն նրանց ներխուժումը կասեցուեց: Զանգեզուրցիների՝ Ա. Շահմագեանի գլխաւորութեամբ Նոյեմբերի 4-12ին տարած փայլուն յաղթանակի շնորհիւ, Բաքուի իշխանութիւնները զիջեցին Ռիայի միջնորդական խիստ ճնշմանն ու 1919 Նոյեմբերի 23ին Թիֆլիսում կնքեցին հայ-ադրբեջանական ջարձակման համաձայնագիր: Երկու վարչապետերը՝ Գերագոյն Յանձնակատարի պաշտօնատարի եւ Վրաստանի արտգործնախարարի ներկայութեամբ, պարտաւորուել են անգէն եղանակով կարգաւորել բոլոր հարցերը³⁹: Այնուամենայնիւ, նոյն ամսի 25ի դրութեամբ 4000 նախիջեւանցի թաթարներ յարձակուել են Սիսիանի հայկական գիւղերի վրայ, բայց գլխովին ջախջախուել: Չորս օր յետոյ Բաքուի իշխանութիւնները մեղադրել են ՀՀՆ Դարալագեազի հնարած,

քարտեզներում երբեիցե չգրանցուած մահմեդական 9 գիւղերի կործանման մէջ⁴⁰:

Այդ ամէնի կողքին, Գողթան վերջին 20.000 հայեր դարձել են Զանգեզուրի համար յետագայ մարտերի պատանդ: Նրանք զոհ են գնացել Զանգեզուրից փախած ու տեղական թաթարների վայրագութիւններից: Խաժամուժը յատկապէս դաժան էր Գողթան հարաւային մասում՝ Ագուլիսով հանդերձ, որտեղ բնակիչները զինափաթուել ու յօժարական յանձնուել էին թաթարներին: Դեկտեմբերի 17-18ին կողոպտուել, իսկ Դեկտեմբերի 24-25ին հիմնայատակ կործանուել է Դաշտը (Ներքին Ագուլիսը): Ամսի 25ին նոյն բախտին է ենթարկուել աւելի մեծ ու հին Վերին Ագուլիսը: Օրդուբադի պարէտ, թուրքական կապիտան Էդիֆ բէյը (պաշտօնավարում էր 1918ի օսմանեան ռազմագրաւումից իվեր) Դեկտեմբերի 19ին այցելել է ագուլիսցիներին՝ խոստանալով Բայազէտից ստորաբաժանումներ կանչել կամ դժբախտ բազմութեանը Արաքսի վրայով ուղեկցել Պարսկաստան: Իրականում նոյն ամսի 24ին ոստիկանութիւնը տներից դուրս է վռնդում մարդկանց ու նրանց յանձնում ջարդարարների յօշոտման: Արդիւնքում Դաշտի փողոցներում տանջամահ են եղել 400, Վերին Ագուլիսում՝ հազար հոգուց աւելի: Միաժամանակ ադրբեջանցիները Դեկտեմբերի 30ին յայտագիր են ներկայացրել Հասկըլին՝ հայերի Զանգեզուրում վարած մարտերի յաղթական ընթացքի դէմ:

Նկատի ունենալով Սիւնիքի անառիկ մնալը՝ Անդրկովկասի երեք արտգործնախարարները՝ Խատիսեանի մասնակցութեամբ, 1920 Յունուարի 22ին Թիֆլիսում ստորագրել են համաձայնագիր: Նրանք ճանաչել են միմեանց անկախութիւնն ու բոլորին պարտադիր իրաւարարութիւնը՝ վիճելի տարածքների նկատմամբ⁴¹: Բանակցութիւնների ժամանակ, սակայն, Ադրբեջանը անդադար մարտեր էր վարում թուրքերի նման: Խաղաղութեան փոխարէն նա ռազմական աշխուժութեամբ էր ամրացնում իր «դիւանագէտների» դիրքերը: Այնպէս որ անդորրը կարճատեւ էր:

1920 Փետրուար-Մարտ ամիսներին երկաթգծով Բայազէտից՝ Մակուի վրայով Նախիջեւան են փոխադրել 200 ասկեար: Սեղմ ժամկէտներում Զուլֆայից մինչեւ Դաւալու բոլոր կարելուր վայրերում տեղակայել են երեք, այնուհետեւ՝ թուրքական եօթ կանոնաւոր գումարտակ: Շարուրում հրամայում էր կրտսեր

լէյտենանտ Նաջին, Օրդուբադում՝ նրա աստիճանակից էդիբը, Նախիջեւանում՝ լէյտենանտ Օսման Նուրին: Խալիլ բէյը մինչեւ Յունիսը ամբողջ գաւառի բոլոր հրոսակների հրամանատարն էր, յետոյ նրան փոխարինել է մայոր Ալի Դեմիրը⁴²:

Այդ ուժերի դէմ կռիւների հերթական ալիքը թափ է արել Մարտ ամսի կէսից: Հայաստանի Հանրապետութեան բանակը կարճ ժամանակով թափանցել է Վերին Ագուլիս, բայց ստիպուած էր անցնել Կապան՝ նոր վայրում իր յաջողութիւնը զարգացնելու:

ՆԱԽԻՋԵՎԱՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՅՄԱՆ
ԱԶԴԵՅՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԵՒ ՀՀ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ադրբեջանի բոլշեւիկներին արագ անձնատուր լինելը Ապրիլի վերջին, խորհրդա-թուրքական սերտ դաշինքի գրաւական դարձաւ՝ ձեւափոխելով տարածքային հակամարտութեան պատկերը: Օսմանեան նախկին զօրավար, այժմ քեմալականների զինակից Նուրի փաշա Զելալն⁴³ ու մուսաւաթական զօրքի միքանի հազար զինեալներ հաշուած օրերում անարգել անցան Պարսկաստանից Նախիջեւան: Մայիսին որպէս տեսուչ գաւառ է այցելել թուրքական 11րդ դիւիզիայի շտաբի պետ⁴⁴: Միւս կողմից, թատերաբեմի նոր դերակատար բոլշեւիկների 11րդ Կարմիր Բանակը 1920 Մայիսի 11ին ստացել է առաջ գնալու եւ Շարուր-Նախիջեւան-Օրդուբադը գրաւելու հրաման: Երկու շաբաթ անց նրա ղեկավարները բողոքել են երկաթուղով մէկ ծաւալուած մահմեդականների յամառ դիմադրութեան համար ու խնդրել ճնշամիջոցների դիմելու թոյլտուութիւն:

Յունիսի կէսին Լեւոն Շանթի դիւանագիտական առաքելութիւնն իր բանակցութիւններն է սկսում Մոսկուայում: Սկզբից Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը միասնական «փաթէթով» է շաղկապել Ղարաբաղ-Զանգեզուր-Նախիջեւանն ու Հայաստանն է ճանաչել այս ամբողջ երկրամասի գերիշխանը: Ղարաբաղում պէտք է անցկացուէր հանրաքուէ, բայց միւս երկու գաւառները անվերապաօրէն անցնէին ՀՀի վարչութեան ներքոյ: Այնուամենայնիւ, Յունիսի վերջին ինքնորոշման յենակէտային սկզբունքը Մոսկուայում փոխարինուել է ռազմաքաղաքական նպատակներով, այդ թում՝ նոր իշխանութիւնը ծաւալելու խնդրով: Ղարաբաղն ու Զանգեզուրը

իրենց հայկական յստակ նկարագրով, ազգային ճնշող մեծամասնութեամբ ու ներքին ինքնավարութեամբ մատնում են լուծեան կամ վիճելի են որակուել: Թէեւ այդ երկու շրջաններում նախատեսուած հանրաքուէի արդիւնքը կասկածի տեղ չէր թողնում, անդին Նախիջեւանը, որտեղ 1918-1919ին ցեղասպանութեան հետեւանքով թուրք-թաթարական եղեռնից յետոյ հայերը թուային մեծամասնութիւն չունէին, Ռուսաստանը ընդունում էր որպէս Հայաստանի միաւոր: Ի տարբերութիւն անգլիացիների՝ բոլշեւիկները չէին մէջբերում տնտեսական գործօնը: Սա հասկանալի է. առետորա-արդիւնաբերական կապերը քաղաքական հնազանդութիւն յիրաւի չեն պահանջում. բաւական է փոխադարձ օգուտը: Այդպէս որ բոլշեւիզմի առաջնորդները՝ Սերգօ Օրջոնիկիձէից, Իոսիֆ Ստալինից ու Վլադիմիր Լենինից սկսած, որոնք հսկում ու ձեւաւորում էին ՀՀ հետ բանակցութիւնները, մի կողմ են դրել ժողովրդավարական ինքնորոշումն եւ անցել նպատակայարմարութեան սկզբունքի:

Քննարկման առաջին փուլում Գէորգի Չիչերինը նկատելիօրէն ուժեղացնում էր ՀՀի դիրքերը Արեւելեան Հայաստանում, թէեւ նրա արեւմտեան նահանգներից հրաժարուելու գնով: Չէ՞ որ կոմիսարը պէտք է Թուրքիային հատուցէր Ադրբեջանի անարին խորհրդայնացման համար: Սակայն, բոլշեւիկեան պայմանները վատթարանում էին հայ պատուիրակների հետ հանդիպումներում, թէեւ Երեւանի պատգամաւորներն անտեսում էին այդ միտումը: Բոլոր հանգամանքներով հանդերձ՝ մոսկովեան բանավէճի ժամանակ միշտ հաստատւում էր Նախիջեւանի պատկանելիութիւնը Հայաստանին: Յունիսի 29ին Չիչերինը յուշագիր է յղել խորհրդային կառավարութեան ղեկավար Լենինին: Նա, բողոքելով Բաքուի՝ Ղարաբաղը, Զանգեզուրը, Շարուր-Դարալագեազը ընդգրկող Նախիջեւանը, Օրդուբադով ու Զուլֆայով պահանջելու դէմ, նշել է այս հողերի առաւելապէս հայկական հսկողութեան տակ լինելու եւ Հայաստանի մաս հանդիսանալու մասին: Չիչերինը դժգոհել է, որ Բաքուն բանեցնում էր Կարմիր Բանակի ուժը վերոնշեալ շրջանները ձեռք բերելու նպատակով:

Միեւնոյն օրը արտգործկոմիսարը հեռագրել է Համօ Օհանջանեանի կառավարութեանը, տեղեակ պահել Բ. Լեգրանին Երեւան գործուղելու ու այնտեղ պայմանագիր կապելու վերջերս

կայացած որոշման մասին: Բանակցային տեղի փոփոխումը վկայում էր նախորդ քննարկումների վիժեցման ու հայ դիանագետների համար բարդ եւ աննպաստ պայմաններում կրած պարտության մասին: Դրա հետ մէկտեղ՝ Նախիջեւանը շարունակ ճանաչում էին որպէս հայկական գաւառ⁴⁵: Իսկ Կարմիր զօրքերը նոյն պահին, շփման մէջ են մտել զանգեզուրցիների հետ Տեղ գիւղում: Ընդ որում, գիւղացիները զգուշացրել էին որ կը պաշտպանուեն:

1920 Յուլիսի 5ին եւ 8ին Խորհրդային Ադրբեջանն ու ՀՀն մեղադրական յայտագրեր են փոխանակել: Օհանջանեանը ոչ միայն պարսաւել է թուրքական միջամտութիւնն, այլեւ Շարուր-Նախիջեւանը անուանել իր հայրենիքի անքակտելի մաս: Ինքը գրել է, որ նախընթաց ամիսներին յատկապէս Խորհրդային ազերի ստորաբաժանումները ներխուժեցին Իջեւան, Շամշադին: Ետ քաշուելու պահին նրանք քանդել են գիւղերը, գերի բռնել կամ սպանել պաշտօնեաներին: Յայտագրից քիչ առաջ՝ Յուլիսի 1ին, թուրքական 11րդ դիվիզիայի հրամանատար Զաւիդ Բէյը Շահթախտ է ուղարկել իր 34րդ գնդի առաջին գումարտակը, իսկ մայոր Վէյսէլը երկրորդ տեսչական շրջագայութիւնն է կատարել Նախիջեւանում: Նա իր հետ է բերել հետեւակի երեք գումարտակ, հրանօթային մարտկոց ու սպաներ: 1920 Յուլիսի 11ին թուրք-թաթարական ուժերի 20 հետեւակային վաշտ, 7 հեծելավաշտ, մարտկոցներ ու գնդացրային անձնակազմ մօտեցել են 1419 մ բարձրութիւն ունեցող, Վեդի աւանից հիւսիս-արեւմտեան կողմում առկայ Երախ գագաթին⁴⁶: Նրանց դիմաւորել է Ղամարլուի ջոկատը՝ զօրավար Շելկովնիկեանի հրամանատարութեամբ⁴⁷:

ՆԱԽԻՋԵՎԱՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱՆՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԲԱՂԱԴԻԻՉ

Յուլիս 12ին, Շելկովնիկեանի վերոյիշեալ ջոկատը իր հսկողութեան տակ առաւ Վեդին, Դաւալուն⁴⁸ ու Սադարակը, իսկ Արարատ կայանում պատրաստ գրահապատ գնացքը մեկնեց հարաւ: Իրավիճակից ելնելով՝ Էրզրումի թուրքական շտաբը հրաւիրել է Կարմիր Բանակը Արաքսի հովտում միանալ քեմալական զօրքերին ու փրկել «կարմիր Նախիջեւանը» «դաշնակների առաջխաղացումից»: Հայ-ռուսական պայմանագրի բացակայութեան կամ Թուրքիա ուղղուած ռուսական

տարանցմանը յարուցած հայերի արգելքը՝ բոլշեիկ-քեմալական կապերի Երեւանի համար բոլոր վտանգներով հանդերձ, ՀՀ դիւանագէտների եւ ղեկավարութեան կոպիտ սխալ էր: Առաջին՝ երկու երկրներն ընդհանուր ծով ունէին ու մեծ նաւահանգիստներ: Երկրորդ՝ ՀՀի «չեզոք» դիրքն եւ որեւէ կողմին չմիանալու գիծը ՀՀն դարձնում էր նրանց մերձեցման համար պարարտ հող կամ երկուսի համար շատ յարմար որս: Բոլշեիկեան Ռուսաստանն ու քեմալական Թուրքիան հարկաւոր էին միմեանց ու կարիք ունէին քաղաքական համաձայնութեան: ՀՀն կարող էր ու պէտք է ուղղէր նրանց ցամաքային տարանցումը քաղաքականապէս նուազ վտանգաւոր Կարսի երկաթուղու վրայով: Սակայն Շանթի՝ մոսկովեան պայմաններին չհաշտուելու հետեւանքով, նրա երկիրը չկարողացաւ ազդել վերոնշեալ պետութիւնների այն մերձեցման վրայ, որը կանխարգելելու միջոցներ չունէր:

Յիրաւի, ռուս-թուրքական համագործակցութիւնը ունէր երկու հնարաւոր երթուղի. ՀՀի եւ Վրաստանի վրայով՝ Սարիղամիշ-Կարս-Ալեքսանդրապոլ գծով, ու Հայաստանի վրայով՝ Նախիջեւան-Ձանգեզուր-Արցախի միջոցով: Առաջին ճանապարհը շահաւետ էր Ռուսաստանի համար եւ զուրկ քաղաքական վնասից: Երկրորդը հրապուրիչ էր Թուրքիայի համար, քանի որ Ռուսաստանից բացի, առաջարկում էր Բաքուն եւ ամբողջ Միջին Ասիա տանող ճանապարհը⁴⁹: Բաքուն Ռուսաստանին ենթարկելու միջոցով Թուրքիան բարձրացնում էր «խաղաղ եղանակով միացած» իր կամակատարի դերն եւ ամէն ինչ անում Հայաստանին ոչ-բարեկամ եւ միանգամայն գրաւուած երկիր դարձնելու համար: Այնուհետեւ Մոսկուան եւ Անգորան սահմանում էին նրանց շփման յստակ կէտը: Բոլշեիկները ընդլայնում էին նրանց ազդեցութեան ոլորտն ու տեղափոխում կցակէտը դէպի հարաւ-արեւմուտք՝ նրանց հնազանդ, թէկուզ առժամանակ ոչ-խորհրդային Հայաստանի պայմանով: Իսկ Անգորան տեղափոխում էր կցակէտը դէպի հիւսիս-արեւելք՝ արդէն խորհրդայնացուած Ադրբեջանի հիւսիսային սահմանին:

Ընդ որում, բոլշեիկները բարեկամական դիւանագիտութիւն էին իրականացնում իրենց կենտրոնում, սակայն տեղում 11րդ Կարմիր Բանակը զէնքի ուժով իրեն էր ենթարկում ՀՀ շրջանները⁵⁰: Դիւանագիտութեան եւ իրական վարմունքի նման ծուլուածքը դրդում էր Երեւանի դահլիճին պատուով վերադառնալ ռուսական

ոլորտ կամ առնուազն երաշխիքներով գործարքի մէջ մտնել ու թոյլ տալ անկասելի տարանջումը: Շանթի պատուիրակութիւնը զիջումներին չէր գնում, ուստի Չիչերինը առաջարկել էր չսահմանել երեք կարելի շրջանների պետական պատկանելութիւնը, այլ նրանք պահել զինուորական ղեկավարման տակ, մինչեւ դրութիւնը բարելաւուի: Լենինն եւ Ստալինը ընդդիմանում էին կիսամիջոցներին: Նրանց կարծիքով՝ Ռուսաստանի երկրամասում կրկին հաստատուելու խնդիրը ՌՍՖՍՀն կանգնեցնում էր մի ընտրութեան առաջ: Մէկ կողմից՝ ՀՀ եւ միւս կողմից՝ Խորհրդային Ադրբեջանի եւ «յեղափոխական, դաշնակցային» Թուրքիայի միջեւ: Թէեւ՝ նման նկատառումներով հանդերձ, Մոսկուան հաշուի էր առնում Հայկական Հարցի միջազգային բնոյթն ու Թուրքիայի ախոյեան մնալու փաստը: Խորհրդային կառավարութիւնը առայժմ զսպում էր իր զինուորականների եռանդն եւ իվերջոյ 1920 Օգոստոսի 10ին՝ Սեւրի Դաշնագրի հետ նոյն օրը, կնքեց Խորհրդա-հայկական համաձայնագիրը: Այն վերապահում էր Կարմիր Բանակի Նախիջեան մտնելու կարելիութիւնը⁵¹:

Մէկ կարելի հանգամանք եւս. 1920ի ամռանը ՀՀ բանակը իր մարտունակութիւնն է ցոյց տուել յատկապէս Նախիջեանի Գաւառում՝ կանոնաւոր թուրքական զօրքերի դէմ կռուելիս: Սակայն այդ յաջողութիւնը հարկաւոր էր զարգացնել միջազգային բարդ պայմաններում: Նման ենթահողում քեմալականները յաջողութեամբ տարան իրենց խաղը ոչ միայն ՀՀ պետական գործիչների, այլեւ Խորհրդային Ռուսաստանի առաջնորդների նկատմամբ: Հայ դիւանագէտների հիմնական թուլութիւնը ժամանակից ու նոր իրադրութիւնից ետ մնալու մէջ էր: Նրանց չէր յաջողում ճիշտ գնահատել ու կանխել իրադարձութիւնների զարգացումը, մեղմացնել իրենց կողմից անվերահսկելի գործընթացները կամ օգտուել դրանցից, ի տարբերութիւն Էրզրումի եւ Բայազէտի քեմալական հրամանատարութեան, որ բոլշեւիկներին բերելով իրեն հարկաւոր երթելով՝ կարողացան ընդհարում առաջացնել Կարմիր Բանակի եւ ՀՀ զօրքերի միջեւ:

ՀՀ ԲԱՆԱԿԻ 1920Ի ԱՄՌԱՆ ԱԶԱՏԱՐԱՐ ԱՐՇԱԻԸ

ՀՀ բանակի Ղամարլուի ջոկատը 1920 Յուլիսի 14ին անցնելով Շարուրը՝ Գայլեդրունքի միջով ու Շարուրի համահաւաք ջոկատի կազմով մտնում է Նախիջեան: ՀՀ զինուորները մարտնչում էին

թուրքական կանոնադր ստորաբաժանումների՝ 18րդ ու 34րդ գնդերի դէմ: Վերջինները, իրենց պահեստային ուժով ու զինուածութեամբ հանդերձ, չնայած իրենց քաղաքական, ռազմադիւանագիտական նուաճումների, այդ իսկ օրը փախուստ են տալիս քաղաքացիական բնակչութեան հետ միասին: Թաթար փախստականների նոր ալիքը սկիզբ է արել Վեդիից, կլանել Շարուրի եւ Նախիջեւանի 60 գիւղերը, հասել Շահթախտի կամուրջը եւ, զանգուածաբար ու խուճապահար գետը կտրելով, անցնում էր Պարսկաստան: Նախիջեւանում տեղակայուած թուրքական զօրամասերը Բայազէտից հրաման են ստացել ետ քաշուել՝ կամուրջին, քաղաքացիական բնակչութեան հեռացումը ապահովելու համար⁵², միաժամանակ՝ Ալի Դեմիրին կարգադրել տեղական ոստիկանութեամբ պաշտպանել Նախիջեւան, Ջուլֆա եւ Օրդուբադ քաղաքները, եթէ դա հնարաւոր լինի: Տեղական մահմեդական խորհուրդը, իր հերթին, ՀՀ բանակից հայցեց զինադադար ու բանակցութիւններ:

1920 Յուլիսի 16ին⁵³ Շելկովնիկեանի ստորաբաժանումները կանգ են արել: Այդ երեւոյթի պարբերական բնոյթը՝ երբ հայկական զօրքերը ընդհատում են իրենց առաջխաղացումը ոչ թէ իրենց որոշումով, այլ արտաքին ճնշման արդիւնքում, մեկնաբանութիւն է պահանջում: Նրանց հակառակորդը՝ թուրքերն եւ ադրբեջանցիները, ստում ու ժամանակ էին ձգում, որպէսզի աննկատ քայլեր անեն, իսկ յետոյ դիմացինին դնեն կատարուած փաստի առջեւ: Պարտութեան պարագային անգամ հակառակորդը վերախմբաւորում էր ուժերը, սպանում, թալանում՝ մեծ կարելոյութիւն հաղորդելով հարստացմանն ու ժողովրդագրական պատկերին: Երբ թշնամուն անհնար էր յաղթել միանգամից, նա աշխատում էր առաւելագոյնս հայութեան վնասել: ՀՀ բանակի՝ դիւանագիտութեան ու պարկեշտութեան անելորդ հակումը քիչ օգուտ էր բերում, քանի որ զիջողական վարմունքը սովորաբար ընկալւում էր որպէս ներքին թուլութիւն կամ ինքնուրոյնութեան բացակայութիւն: Թշնամու խնդրանքը ինքնըստինքեան բաւական էր կասկածելու զինադադարի ցանկալիութեան վրայ:

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՀՀ ԿԱԶՄՈՒՄ

Այնուամենայնիւ, Նախիջեւանի ՄԱԽԻ պատգամաւորները

Ժամանեցին Երեւան, որտեղ ռազմական նախարար Տէր Մինասեանը ու նրա տեղակալ Հ. Հախվերդեանը 24 ժամ են տրամադրել խաղաղութեան պայմաններն կշռադատելու համար: Նրանք ՄԱԽից պահանջել են ճանաչել Շարուր-Նախիջեւանը որպէս Հայաստանի անբաժան մաս, իսկոյն զինափաթել բոլոր զինեալ ուժերը, վերականգնել 1919ին գրաւած ունեցուածքն ու սեփականութիւնը, յանձնել առնուազն 10,000 հրացան՝ իւրաքանչիւրը 100 փամփուշտով, ամբողջ հրետանին, ինչպէս եւ 150,000 փութ (2.708 տոննա) ցորեն, վաճառել կառավարութեանը եւս 150,000 փութ հացահատիկ, նաեւ 300 ձի ու 200 գլուխ լծկան անասուն, ապահովել իրենց իսկ քանդած երկաթուղու նորոգումը: Այդ ամէնի դիմաց հաշտուած կողմը ստանում էր կրօնական-մշակութային ինքնավարութիւն, տեղական իր վարչութիւնը, խորհրդարանում իր պատգամաւորներին: Նա կարող էր դատուել շարիաթի կանոններով՝ փոխադարձ համաձայնութեան դէպքում⁵⁴:

Յուլիսի 20ին ՄԱԽը ճանաչել է Գայլեդրունքից Ջուլֆա սփռուած Շարուր-Նախիջեւանը ՀՀ կազմում՝ իր զանգուածի ներքին լիակատար ինքնավարութեամբ հանդերձ: Ժամանակ շահելու համար, պատգամաւորները տուն են մեկնել, եւ արդէն գաւառի կենտրոնից ՀՀ դահլիճը իրազեկել, թէ պատրաստ են վերսկսել Երեւանեան բանակցութիւնները՝ Դաշնակիցներից մէկի ղեկավարութեան ներքոյ⁵⁵: Վերջնական պատասխանի բացակայութեան պայմաններում հայկական զրահագնացքը Յուլիսի 23ին վերսկսել է առաջխաղացումը, իսկ թուրքական զօրքերը ետ են կանչուել Ջուլֆայից եւ Օրդուբադից Շահթախտ, անցել Պարսկաստան: Ամսի 24ին երկաթգծի եւ խճուղու երկայնութեամբ սկսուել է հայկական 2000անոց հետեւակի գլխաւոր յարձակումը: Յուլիսի 25ին ազատագրուել է Շահթախտը (Արքաշատն), ու ՀՀ բանակը դիրքաւորուել է գաւառի կենտրոնից 27 կմ հեռու: Նախիջեւան քաղաքի հազարաւոր բնակիչները փախան, իսկ ՄԱԽը շտապ ձեւափոխուեց տեղական յեղափոխական կոմիտէի: Նրա պարագլուխները դիմեցին Խորհրդային Ադրբեջանին ու Կարմիր Բանակին՝ վերջինին հրաւիրելով զաւթակալել մահմեդականներից պարպուող շրջանը: «Յեղկումը» միաժամանակ դիմել է ՀՀ զինուժին՝ առաջարկելով կազմակերպել Նախիջեւանի խաղաղ յանձնումը:

Նրանք նորից ժամանել են Երեւան, որտեղ ամսի 27ին ՀՀ

վարչապետ Օհանջանեանի վկայութեամբ, ճիշտ նոյն պահանջներն են ներկայացրել: Յետոյ այդ անձանց հասցրել են շրջան, սակայն այժմ՝ Յուլիսի 30ին, մահմեդականները իրենք են վերջնագրով պատասխանել ՀՀին⁵⁶: Չէ՞ որ երկու օր առաջ 11րդ Կարմիր Բանակի երկու հեծելավաշտ՝ իրենց գնդացիներով ու մարտկոցով, իջել են Նախիջեանի խճուղի՝ քաղաքին մօտ: Նրանց հետեւել են Խալիլ փաշա Քութն⁵⁷ ու քեմալականների համար առաջին 407,5 կգ ոսկով բեռնուած խորհրդային առաքելութիւնը⁵⁸: Խալիլի եւ առաքելութեան ժամանման արդիւնքում 1920 Յուլիսի 30ին գնդապետ ՌԻ. Տարխովը դիմել է Շահթախտում տեղակայուած հայ հրամանատարներին, որպէս՝ «*Նախիջեանի եւ նրա շրջակայքի ռազմագրաւած ՌՍՖՍՀ-ում ու կարմիր Թուրքիայի միացեալ զօրքերի հրամանատար*»: Ինքը գրել է. «Ռուսաստանի խորհրդային Ֆեդերատիւ Սոցիալիստական Հանրապետութեան Կարմիր Բանակն ու կարմիր Թուրքիայի դաշնակից զօրքերը հրամանը կատարելիս 1920 Յուլիսի 28ին մտել են Նախիջեանն ու նրա շրջակայքը՝ առանց Հայաստանի դէմ թշնամական գործողութիւններ կատարելու նպատակի:

Մեր ստացած վստահելի տեղեկութիւնների համաձայն, ձեր զօրքերը մտադիր են առաջադիմել Նախիջեան, այն մատնելով հրոյ ու սրոյ: Թիփիմացութիւններից ու նրանցից սերուող հնարաւոր եւ անցանկալի արինահոսութիւնից խուսափելու համար պետական կարելորութեան գործ է իմ ձեզ տեղեակ պահելը մեր՝ Նախիջեանն ու նրա շրջակայքը գրաւելու մասին»⁵⁹:

ՆԱԽԻՋԵԱՆԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ

Յաջորդ օրը զօրավար Խալիլը իր յանձնարարականն է հեռագրել Քեազիմ Կարաբեքիրին Էրզրում՝ չթողնել Նախիջեանը եւ այնտեղ տեղակայել մէկ դիւիզիա: Իսկ Բայազետի շտաբը հրաման է արձակել 3 գումարտակ, այն է՝ 500 ասկերար ու 4 թնդանօթ վերադարձնել նոյն շրջանը: Թուրքական ամբողջ համակազմը իր զգեստներից հանել է *տրէզներն* եւ ուսադիրները՝ թողնելով միայն կարմիր աստղն ու կիսալուսինը գլխարկներին⁶⁰: Այդ պահին, ՀՀ բանակը կանգնած էր Նախիջեան քաղաքից 6,5 կմ հեռաւորութեամբ:

Պատերազմական յաջող ընթացքը ամրացրել են Ա. Զամալեանի եւ Ա. Բաբալեանի 1920 Օգոստոսի 6ին Լեզրանի հետ

Թիֆլիսում սկսած հայ-խորհրդային բանակցությունները: Ի վերջոյ, Օգոստոսի 10ին կայացած համաձայնագրում հայկական կողմը ընդունել է երեք շրջանների վիճելի կարգավիճակն եւ նրանց բոլորի Կարմիր Բանակով գրաւուած լինելու փաստը: Ի պատասխան, ՌՍՖՍՀՆ ճանաչել է Հայաստանի անկախութիւնը, ՀՀ ստորաբաժանումները մնացին Շախթախտի եւ Խոքի դիրքերում⁶¹, իսկ Երեւանը պահանջել է Զուլֆա տանող երկաթուղին շահագործելու իրաւունքը⁶²:

Նման իրավիճակում Օգոստոսի 18ին նորից իրեն զգացնել տուեց պարսկական գործօնը. արտգործնախարար Ֆեհիմ Դովլէիը Գիլիստանում հանդիպել է ՀՀ լիազօր դեսպանորդ Յ. Արղութեանի հետ ու հայկական բանակից խնդրել զինադադար, որպէսզի արեւմտեան Դաշնակիցները կարողանային քաղաքական լուծում կայացնել, կամ էլ զինուած ուժերը յատուկ համաձայնագիր կնքէին «Նախիջեւանի ժողովրդի» հետ: Չէ՞ որ Անդրկովկասի թաթարները նախկինում եղել են Պարսկաստանի հպատակ ու պատկանում էին իսլամի շիա ճիւղաւորման: Արղութեանը նրան տեղեկացրեց, որ ՀՀն վերադարձնում է իր անքակտելի մասը: Հետեւաբար, փոխնախարարը հայցեց ՀՀ ստորաբաժանումներից՝ թէկուզ միքանի օր սահմանափակուել պաշտպանական գործողութիւններով:

Ամսի 28ին Մոսկուայում տեղի է ունեցել մէկ ուշագրաւ հանդիպում ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողկոմ Չիչերինի, նրա քեմալական պաշտօնակից Բեքիր Սամիի հետ: Առաջինն ընդունել է թուրքական բացատրութիւնը Շախթախտի զաւթման առնչութեամբ ու կրկնել անգլիացիներին բնորոշ հնարքը: Նա չէր պնդում հասանելի եւ աւելի հեշտ հսկուող Նախիջեւանի վրայ, սակայն խօսում էր հայկական Վանի եւ Բիթլիսի մասին: Չիչերինը պաշտպանում էր անկախ եւ իր կազմով միատարր ՀՀին, ուստի առաջարկում էր բնակչութեան փոխանակում: Ժողկոմը նշում էր իր պահանջների բաւականին նուազ լինելու մասին՝ Անտանտի համեմատ, իսկ Ռուսաստանի ռազմական օգնութեան բացակայութիւնը յանգելու էր Թուրքիայի պարտութեան: Ընդ որում, Վանի յիշատակումն այլ նպատակ չունէր, բացի միւս կողմի նկատմամբ ճնշում գործադրելուց, քանի որ Բեքիրին հաւաստիացրին՝ ռազմամթերքը ուղարկում է անյապաղ՝ առանց Արեւմտեան Հայաստանին առնչուող յստակ պատասխանի⁶³:

Բերքիրը ըմբռնում էր ռուսական թէկուզ նուազ պահանջների աւելի իրական լինելը, քան՝ արեւմտեանը: Ուստի նա Անգորա է հեռագրել Ռուսաստանի՝ Հայաստանին ուժեղացնելու մասին, վերջինի խորհրդայնացնելու հեռանկարով: Ինքը խնդրել է շտապ այլ նահանգներից Բիթլիս ու Վան տեղափոխել ցեղեր ու մուհաջիրներ, որպէսզի հայկական նահանգներում ամրացուի այլազգիների տոկոսը:

Ի պատասխան, Կարաբեքիրը մտահոգուեց՝ նախքան Նախիջեւանին այլընտրանք հանդիսացող Սարիղամիշի բարձունքների ասկեարներով գրաւումը ՀՀ-ում նոր կարգերի ընդունումը՝ Թուրքիային անհնար կը դարձնի 1914ի սահմանի հատումն ու նոր պատերազմի սանձազերծումը: Խալիլ փաշայի գնահատմամբ՝ խորհրդային իշխանութիւնը ՀՀ-ում պէտք է կայանար Օգոստոսի 21-25ին⁶⁴: Ինչպէս գիտենք, քեմալականների երկիւղը չի հաստատուել: Շանթի պատուիրակութիւնը Սեպտեմբերի 14ին վերջապէս վերադարձաւ Երեւան, որտեղ իր միտքն առաջ քաշեց՝ բոլշեւիկներին առաջարկել փոխզիջում՝ Սեւրի նկատմամբ, սակայն հեռացնել նրանց զինուժը Նախիջեւանից ու Զանգեզուրից: ՀՀի դահլիճը մերժեց այդ միտքն ու մեծ վստահութիւն յայտնեց իր բանակի մարտունակութեան: Սեպտեմբերի 19ին ՀՀ կառավարութիւնը հրաւիրեց ՌՍՖՍՀ լիազօր ներկայացուցիչ Լեգրանին Երեւան, սակայն վերջինս ժամանեց մէկ ամիս աւելի ուշ:

1920Ի ԹՈՒՐԲ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ՆԱԽԻՋԵՒԱՆԸ

Քեմալի՝ Սեպտեմբերի 20ին արձակած հրամանով սկիզբ առաւ չարաքաստիկ, ծանրագոյն կորուստների պատճառ՝ թուրք-հայկական պատերազմը: Ռազմական գործողութիւնները սկսուեցին ամսի 22ին: Սակայն Շանթի խումբը Լեգրանի հետ երեւանեան սեղանի շուրջ բանակցելիս Սեւրից չէր հրաժարում Հոկտեմբերի 13ին անգամ: Հայկական կողմը անտեսում էր Սեւրի պատերազմի պատճառ casus belli հանդիսանալու պարագան, այն էլ այնպիսի պատերազմի, որը յաղթելն անհնար էր ուժասպառ ՀՀի հասարակութեան համար: Աւելին, հայկական կողմը սեղանին դրեց Արաքսի հովտում տարանցման վերաբերեալ կանխաւ անընդունելի, անզլիացիների հետ համաձայնեցուած պայմանները: Պահանջների ցուցակում էին Նախիջեւանի

վերադարձը, թուրքական բանակի լիակատար դուրսմղումը, ՀՀ սահմանների ճանաչումը Տրապիզոնով եւ Էրզրումով, ինչպէս եւ տարանցիկ ռազմական բեռների կէսի փոխանցումը ՀՀին: Հոկտեմբերի 24ին՝ պատերազմի աղէտալի պայմաններում, հայկական կողմը համաձայնուեց տարանցման ու խօսք բացեց 1914 սահմանի մասին:

Այնուհետեւ՝ 1920 Հոկտեմբերի 28ին, Երեւանում ստորագրուեցին երեք փաստաթուղթ, որոնք հիմք են ծառայել միասին ձեակերպուած հաշտութեան պայմանագրի նախագծի համար: Հանրագումարային պայմանագրի յայտարարութեամբ՝ ՌՍՖՍՀՆ եւ Խորհրդային Ադրբեջանը ճանաչում էին ՀՀ անսասան իրաւունքը Նախիջեւանի եւ Զանգեզուրի նկատմամբ, այնտեղից դուրս էին բերում իրենց զօրքերը ՀՀի՝ Արցախից հրաժարուելու դիմաց: Բացի դրանից, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բոլոր ներկայ սահմանային վէճերը կարգաւորում են այս երկու կողմերը՝ Ռուսաստանի միջնորդութեամբ, կամ **հանրաքուէով**⁶⁵: Նման պայմանաւորուածութիւնը անհամատեղելի էր քեմալական ծրագրերի հետ, ու թուրքական զօրամասերը՝ տեղական հրոսակների հետ միասին, Նոյեմբերի 12-17ին գրոհեցին Նախիջեւանում Շելկովնիկեանի 21րդ ու 3րդ գնդերի վրայ: Առաջին յարձակումները ետ մղուեցին, բայց աւելի ուշ ՀՀ բանակը կորցրեց համարեա ամբողջ Շարուրն ու նահանջեց Գայլեղորոնք: Նոյն օրերին՝ Նոյեմբերի 15ին, Օհանջանեանի կառավարութիւնը անձնատուր եղաւ՝ դեռեւս յոյսեր փայփայելով, թէ Թուրքիան կը պահպանի հաւաք եւ անկախ Հայաստանը իր սահմանի վրայ՝ մեծ ու ներքուստ վտանգաւոր Ռուսաստանից մեկուսանալու համար:

Նոյեմբերի 30ին Ալեքսանդրապոլում թուրքերը Խատիսեանին յանձնել են սահմանը պարունակող քարտէզ: Այժմ քեմալականներն իրենց էին վերապահում Շարուր-Նախիջեւանի վերահսկումը մինչեւ նրա տեղական ինքնակառավարման հաստատումը: Քարտէզին հետեւեց Կարաբեքիրի ընդարձակ յուշագիրը՝ նուիրուած թուրքական դերակատարութեանը պատմութեան ու համաշխարհային քաղաքակրթութեան մէջ: Ինքը՝ 1920 Դեկտեմբերի 2ի Ալեքսանդրապոլի պայմանագիրը, Յօդուած 2ով վերապահել էր հաստատել Շարուր-Շահթախտ-Նախիջեւանի վարչակարգը հանրաքուէով եւ առանց Հայաստանի

միջամտութեան: Մինչեւ հանրաքուէի անցկացումը ստեղծում ու գործում էին տեղական իշխանութիւնները՝ Թուրքիայի պաշտպանութեան ներքոյ: Յօդ. 12ով Անդրկովկասում մտցում էր անմաքս տարանցում ու Թուրքիայի, Շարուր-Նախիջեւանի եւ Պարսկաստանի միջեւ ճանապարհներով եւ երկաթուղով փոխադրումների ազատութիւն: Քեմալականները դառնում էին նրանց գլխաւոր վերակացուն՝ մինչեւ որ ստորագրեն ընդհանուր համաձայնագիրը: Ըստ Յօդ. 16ի՝ ՀՀն պէտք է ստանար նրանց համաձայնութիւնը՝ երկաթգծի վերականգնման, հեռախօսից, հարեւանների հետ սուրհանդակների ծառայութիւնից օգտուելու համար⁶⁶:

Այնուամենայնիւ, վերոնշեալից կէս օր առաջ եւ իսկապէս 1920 Դեկտեմբերի 2ին ՀՀի եւ ՌՍՖՍՀի միջեւ ստորագրուել էր մի համաձայնագիր, որով սոցիալիստական Հայաստանի Հանրապետութեան անվիճելի տարածք էին ճանաչում Երեւանի Նահանգի բոլոր գաւառները՝ Նախիջեւանն ու Զանգեզուրը ներառեալ:

Հանրագումարի բերելով՝ դժուար է չհամաձայնել տուեալ ասպարէզի ռահվիրա, ամերիկեան պատմաբաններից առաւել գիտակ ու հեղինակաւոր մասնագէտի եզրակացութեանը, թէ թուրքական նախագիծն ու յատկապէս Ալեքսանդրապոլի Պայմանագիրը «ցրել է հայկական պատուիրակութեան յոյսի վերջին փշրանքն ու ցոյց տուել, որ նրա հաշուարկները թուրքական ընդարձակման ու գերիշխանութեան վերաբերեալ բացարձակապէս սխալ էին»⁶⁷:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, աշխատ.՝ Մ. Աբեղեան, Ս. Յարութիւնեան, Երեւան, ՀԽՍՀ ԳԱ, 1991, էջ 83, 112, 180, 296. նաեւ՝ Փաւստոս Բուզանդ, *Հայոց Պատմութիւն*, թարգմ.՝ Ս. Մալխասեանց, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1987, էջ 267. նաեւ՝ Ս. Տ. Երեմեան, *Հայաստանը Ըստ «Աշխարհացոյց»-ի*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ, 1963, էջ 72, 109-110. նաեւ՝ Է. Լ. Դանիէլեան, *Հայաստանի Քաղաքական Պատմութիւնը Եւ Հայ Առաքելական Եկեղեցին (VI-VII դդ.)*, Երեւան, Անկիւնաքար, 2000, էջ 37. նաեւ՝ Ա. Մուշեղեան, *Մովսէս Խորենացու Դարը*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2007, էջ 111, 124:

² Խորենացի, էջ 83. նաեւ՝ Араке́л Даври́дзев, *Книга Исторіи* (Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեան), թարգմ.՝ Լ. Խանլարեան, Մոսկուա, Նաուկա, 1973, էջ 52-53, 55, 73-78, 401. նաեւ՝ Յարութիւն Քիրտեան, *Ջուղայեցի Խօջայ*

- Նազար եւ Իւր Գերդաստանը, Պոսթըն, Հայրենիք, 1943. նաեւ՝ Մ. Ա. Աւետիսեան, «Նախիջեանի Պատմութեան Վաւերագրեր (1889-1920թթ.)», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1996, № 3, էջ 186. նաեւ՝ Արգամ Ա. Այվազեան, *Նախիջեան*, Երեւան, Յուշարձան, 1995, էջ 124, 127:
- ³ Թ. Խ. Յակոբեան, Ս. Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Ճրջանների Տեղանունների Բառարան*, Հտր. 4, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1998, էջ 427. նաեւ՝ *The Annihilation of the Armenian Cemetery in Jugha*, RAA Research on Armenian Architecture, Beirut, Photogravure, Lebanon, 2006:
- ⁴ Խ. Յ. Աղալբեգեան, *Հողային Հարցը Արեւելեան Հայաստանում (1801-1917թթ.)*, Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 6-10. նաեւ՝ *Հայ Ժողովրդի Պարմութիւն, Ութ Հատորով*, Հտր. V, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1974, էջ 13, 204-210, 219. նաեւ նոյն՝ Հտր. VI, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1981, էջ 15-16:
- ⁵ Վ. Ն. Ղազախէցեան, «Նախիջեան-Շարուրը 1918-1921թթ., Փաստաթղթեր եւ Նիւթեր», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, 1993, № 1-2, էջ 25. նաեւ՝ Այվազեան, էջ 7. նաեւ՝ Է. Ա. Զոհրաբեան, *Ազգամիջեան Կոիւները Երեւանի Նահանգում 1918թ.*, Երեւան, Հայաստան Հրատ., 2000, էջ 77:
- ⁶ Նախիջեանի եւ մէկ ուշագրաւ կենտրոն է հանդիսանում Ք.ա. III դ. հիմնադրուած թագաւորանիստ քաղաք Արքաշատը (Արշատ-Շահաթատը): Նրա տարածքում յայտնաբերուել են Ք.ա. II-I հազարամեակին պատկանող Վանի թագաւորութեան թաղումներ ու սեպագրեր (Այվազեան, էջ 157-159):
- ⁷ Հ. Ռ. Սիմոնեան, *Անդրանիկի Ժամանակը, 2 Գրքով, Գիրք Բ.*, Երեւան, Կախա, 1996, էջ 201. նաեւ՝ Զոհրաբեան, *Ազգամիջեան Կոիւները*, էջ 79:
- ⁸ Հայաստանի անկախութիւնը հռչակելու Ակտը ամբողջութեամբ ներկայացուել ու ներգրաւուել է ԱՄՆի Կոնգրէսի վաւերագրերի դիւան ու հրապարակուել է. *Maintenance of Peace in Armenia. Hearing before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, 66th Congress, 1st Session on Senate Joint Resolution N^o 106 A Joint Resolution for the Maintenance of Peace in Armenia*, Wash., GPO, 1919, էջ 60-62. նաեւ՝ *Armenian Review*, 1980, vol. 33, № 4, էջ 441-443. հռչակման մասին տե՛ս նաեւ՝ Վ. Թորոլվենց [Ա. Մարմարեան], *Զոր. Անդրանիկ եւ Իւր Պարտերազմները*, Կ.Պոլիս, Կիւթէնպէրկ, 1920, էջ 311-312, 315-316. նաեւ՝ Ա. Թէրզիպաշեան, *Անդրանիկ*, Փարիզ, Տպ. Ա. Տէր Յակոբեան, 1942, էջ 332-333. նաեւ՝ *Հայկական Հարց: Հանրագիտարան*, Երեւան, Հայկական Հանրագիտարան, 1996, էջ 136:
- ⁹ Թուրքիան, Մայիսի 26ի վերջնագրով անմիջապէս նշել է Բաքուն որպէս նրա նպատակ, տե՛ս՝ Документы И Матерьялы По Внѣшней Политикѣ Закавказья И Грузии (Փաստաթղթեր ու նիւթեր Անդրկովկասի եւ Վրաստանի արտաքին քաղաքականութեան վերաբերեալ), Թիֆլիս, Վրաստանի Հանրապ. Կառավար. Տպարան, 1919, էջ 309: Նա հսկայական տարածքային յաւելում է պահանջել՝ որը ներառնում էր Նախիջեանի ամբողջ գաւառը, առանց Օրդուբադի: Վերջինս նախատեսել են երկրամասի արհեստածին Ադրբեջանի համար: Տեղին է շեշտել, որ Խալիլ փաշան ու Վեհիբը երբեք չէին հիմնաւորում իրենց յաւակնութիւնները պատմական, տնտեսական կամ ազգագրական փաստարկներով: Նրանք խօսում էին բացառապէս զաւթիչի իրաւունքների եւ ուղիղ բռնագրաման մասին: Ըստ Վեհիբի, կորցնելով բալկանեան եւ Ափրիկէի

հողերը, Օսմանեան Կայսրութիւնը շարժուեց արեւելք՝ իր արեւմտեան կորուստները լրացնելու մտադրութեամբ: Արեւելեան ճանապարհի վրայ նրան հետաքրքրում էին երկու ուղղութիւն՝ դէպի Գանձակ կամ դէպի Արաքս-Կուր գետերի հովիտը, այնուհետեւ՝ երկուսն էլ տանում էին Բաքու: Երկրորդ ուղղութիւնն անցնում էր Շարուրի, Նախիջեւանի եւ Զանգեզուրի վրայով (Ա. Խատիսեան, *Հայաստանի Հանրապետութեան Ծագումն Ու Զարգացումը*, Բ. տիպ, Բէյրութ, Տպ. Համազգային, 1968, էջ 86-ում զետեղուած Վեհիբի լուսաբանումը տրուել է Մայիսի 30ին Բաթումի համագումարի 3րդ նիստում. տե՛ս նաեւ՝ էջ 72, 77). նաեւ՝ R. Hovannisian, *Armenia on the Road to Independence, 1918*, Berkeley & Los Angeles, University of California Press, 1967, էջ 195: Հայաստանի համար Բաթումի Պայմանագրով նախատեսուած կապանքներից դուրս իրականացուող թուրքերի ցեղասպան քաղաքանութեան մասին տե՛ս՝ Սիմոնեան, էջ 242, 259):

¹⁰ Ե. Քաջունի, *Հայկական Առանձին Հարուածող Զօրամասը, Ժեներալ Անդրանիկ*, Պոսթոն, Տպ. Ազգ, 1921, էջ 10: Մէկուկէս հազարից պակաս հմուտ ու կազմակերպուած մարտիկները՝ կարող հրամանատարութեան ներքոյ, բաւական էին 20, այնուհետեւ 35000 խաղաղ բնակչութեան կեանքը պաշտպանելու համար:

¹¹ Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), Երեւան, ֆոնդ 370, ցուցակ 1, գործ 38, թերթ 26. նաեւ՝ G. Korganoff, *Le Participation des Arméniens à la Guerre mondiale sur le front du Caucase (1914-1918)*, Paris, Massis, 1927, էջ 162: 1918 Յունիսի 18ին Անդրանիկի մարտիկները մտել են Նախիջեւան քաղաք, ամսի 20ին նրանք Զուլֆայում էին: Յունիսի 21-24ին Հարուածային Զօրամասն ու գաղթականները գտնուում էին Պարկաստանում: Աւելի ուշ՝ Խոյի մօտակայքում ծանր մարտերի բռնուելուց յետոյ, նրանք վերադարձան Արաքսի ձախ ափը եւ Յունիսի 25ին շարժուեցին Գողթն, որտեղ հիւանդացած Անդրանիկը բուժում էր ստանում Յոնա գիւղում: Յուլիսի 9-12ը ինքը այնտեղից Ապրակունիս է տեղափոխել իր մարտիկներին ու գաղթականութեանը:

¹² Քաջունի, էջ 70-71, 73-74, 76. նաեւ՝ Սիմոնեան, էջ 213, 216-217, 237, 243, 245, 248, 285:

¹³ 1381ին հիմնադրած վանքը բացուել է 1369-1391ին գործող միջնադարեան համալսարանի պատերում: Վերջինը սկիզբ է արել Ս. Գէորգ եկեղեցու տանիքի ներքոյ՝ Մաղաքիա Ղրիմեցու ջանքերով: Ապրակունիսի համալսարանը առնչւում է ԺԴ դարի գիտնականներ ու լուսատրիչներ եռամեծ Յովհան Որոտնեցու եւ Գրիգոր Տաթեւացու անունների հետ: Այնտեղ է 1386ին մեռել ու թաղուել է Արիստոտելի հետետորդ Յովհանը, որը հաւատում էր ընդհանուրի՝ իրենց յատկութիւններով միատարր եզակիներից կազմուած ու նրանցից կախուած լինելու, բնութեան սկիզբ ունենալու, բայց վերջ չունենալու գաղափարին:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 41, թ. 5-6; ց. 2, գ. 15, թ. 2-3. նաեւ՝ Քաջունի, էջ 68-69. նաեւ՝ Андраник Озанян, *Документы и материалы* (Անդրանիկ Օզանեան. Փաստաթղթեր եւ նիւթեր), կազմ.՝ Ա. Յարութիւնեան եւ ուրիշներ, Երեւան, ՀՀ ԳԱ Պատմութեան ին-տ, 1991, էջ 288-289. նաեւ՝ «Նախիջեւան-Շարուրը», էջ 41-45. նաեւ՝ Անդրանիկ Չելեպեան, *Զօրավար Անդրանիկ*, Երեւան, Արեւիկ, 1990,

էջ 475-476, 515. նաեւ՝ Սիմոնեան, էջ 262-263, 265:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 212, թ. 89. նաեւ՝ Ա. Եփրիկեան, «Փաստաթղթեր Շարուր-Նախիջեանի Հայ Գաղթականների Խնդիրների Մասին», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, 2009, № 2, էջ 57-58:

¹⁶ *Զորավար Անդրանիկի Կովկասեան Ճակարկի Պատմական Օրագրութիւնը, 1914-1917, Օրագրուած Զորավարին Թիկնապահ Զինուորէն*, Պոսթոն, Տպ. Պայքար, 1924, էջ 96-97: Հրատարակուել է՝ Չելեպեան, էջ 441. նաեւ՝ Սիմոնեան, էջ 86-87: Տե՛ս նաեւ՝ Ա. Զոհրաբեանի, Ս. Խաչատրեանի, Ա. Երզնկեանի, Ս. Յարութիւնեանի, Յովհաննէս Թումանեանի, Արամ Մանուկեանի, Ա. Ահարոնեանի, յատկապէս Ս. Փիրումեանի ելոյթները Հայոց Ազգային խորհրդի Թիֆլիսում 1918 Ապրիլի 12ին գումարուած նիստում՝ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 174-176: Նոյն վտանգի մասին զգուշացրել էր Լէօն՝ Ալեքսանդրապոլում անցկացրած Արտակարգ խորհրդակցութեան 1918 Ապրիլի 20ի նիստում (գ. 123, թ. 13 դարձ), եւ Ս. Մամիկոնեանը, Ռուբէն Տէր Մինասեանը՝ Կենտրոնական ՀԱԽի Ապրիլի 25ի նիստում (գ. 141, թ. 181-181 դարձ):

¹⁷ Տե՛ս նաեւ՝ Յ. Ղուկեան, «Մահմեդական Բնակչութեան Հակապետական Ելոյթները ՀՀ-ի Դէմ (1919թ.)», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, 2011, № 1, էջ 116:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 39, թ. 9-12:

¹⁹ Նոյն, գ. 120, թ. 1:

²⁰ Բրիտանական ռազմական նահանգապետութեան մասին տե՛ս նաեւ՝ Է. Ա. Զոհրաբեան, *Նախիջեանեան Հիմնահարցը Եւ Հայաստանի «Դաշնակիցները» (1918թ. Դեկտեմբեր-1920թ. Ապրիլ)*, Երեւան, «Տիգրան Մեծ» Հրատ., 2002, էջ 60, 63:

²¹ R. Hovannisian, *The Republic of Armenia, Vol. I The First Year, 1918-1919*, Berkeley & Los Angeles, University of California Press, 1971, էջ 215:

²² 1850-1950ականներին, ցանկացած անկախ պետութեան գլխաւոր յատկանիշը իր բնակչութեան ինքնուրոյն պաշտպանութիւնն էր արտաքին հնարաւոր յարձակումից: Սակայն 1950ականներից իվեր շատ քիչ թուով գերտէրութիւններ ի վիճակի են ապահովել նման անվտանգութիւնը: Այսօր պետութիւնների ճնշող մասը պաշտպանում է համախմբուած ուժերով՝ անդամակցելով ռազմաքաղաքական միութիւնների:

²³ Երեւանի Խանութեան վարչական միաւորը՝ ԺԹ. դարի սկզբին, ու Երեւանի Նահանգի բաղադրիչը մինչեւ 1918՝ Զանգիբասարի կենտրոնը գտնուում էր Երեւանից 9 կմ. հարաւ-արեւմուտք: Այն որոգել է Զանգու (Հրազդան) գետը: Այժմ Մասիսի համայնք ու քաղաք ՀՀ Արարատի Մարզում (Վ. Ռ. Գրիգորեան, *Երեւանի Խանութիւնը XVIII Դարի Վերջում*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ, 1958, էջ 33. նաեւ՝ Աղաբեգեան, էջ 6. նաեւ՝ *Հայ Ժողովրդի Պատմութիւն*, Հտր. V, էջ 14. նաեւ՝ *История Армянского Народа* (Հայ Ժողովրդի պատմութիւն), խմբ.՝ Մ. Ներսիսեան, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1980, էջ 183. նաեւ՝ Է. Ա. Զոհրաբեան, *Նախիջեանեան Հիմնահարցը (1918-1921)*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2010, էջ 50-53:

- ²⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 2, թ. 252-252 դարձ. նաեւ՝ ֆ. 275, ց. 5, գ. 183, թ. 81 դարձ.-82:
- ²⁵ Գրիգորիյ Յարութինի Շելկովնիկեանը Նախիջեանի ռազմական նահանգապետ է եղել 1919 Յունիսի 4ից (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 43, թ. 130): Խատիսեանի Նախիջեանում մնալու մասին տե՛ս նաեւ՝ Զօհրաբեան, *Նախիջեանեան Հիմնահարցը եւ Հայաստանի*», էջ 99-100:
- ²⁶ Տե՛ս նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 212, թ. 114. նաեւ՝ Ա. Եփրիկեան, «Հայաստանի Հանրապետության Իշխանության Տարածումը Նախիջեանում 1919թ.», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, 2004, № 1, էջ 57:
- ²⁷ Տե՛ս նաեւ՝ Слово (Խօսք), Թիֆլիս, 30. 10. 1919. նաեւ՝ Զօհրաբեան, *Նախիջեանեան Հիմնահարցը եւ Հայաստանի*, էջ 152-156, 166-168:
- ²⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 357, մաս 1, թ. 40. նաեւ՝ Մ. Ա. Աւետիսեան, էջ 193:
- ²⁹ R. Hovannisian, *The Republic of Armenia, vol. II From Versailles to London, 1919-1920*, Berkeley & Los Angeles, University of California Press, 1982, էջ 75:
- ³⁰ United States National Archives, Washington D. C., Record Group 256 Records of the American Commission to Negotiate Peace, class 184.021/document 285 (այսուհետեւ՝ US NA, RG).
- ³¹ Մանրամասն՝ K. Karabekir, *Istiklâl Harbimiz* (մեր անկախութեան պատերազմը), Istanbul, Türkiye Yayınevi, 1960, էջ 328-330:
- ³² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 362, թ. 81:
- ³³ Օրինակ, նրա շտաբի պետի հեղինակած յուշերի գրքոյկում՝ Veysel Ünüvar, *Istiklâl Harbinde Bolşeviklerle Sekiz Ay, 1920-1921*, Istanbul, Y. Y., 1948 (1920-1921). Անկախութեան պատերազմի ութ ամիսները բոլշեւիկների հետ). նաեւ՝ Karabekir, էջ 413-414:
- ³⁴ Հասկըլի 1. 09. 1919ի առաջարկութիւնները տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 183, թ. 21-22: Հայկական 6. 09. 1919ի հակաառաջարկը՝ նոյն տեղում, թ. 8-9 դարձ.: Տե՛ս նաեւ՝ թ. 38-39: Թաթարների 9. 09. 1919ի յուշագրի մասին տե՛ս՝ Ա. Վրացեան, *Հայաստանի Հանրապետութիւն*, Երեւան, Հայաստան Հրատ., 1993, էջ 324: Նաեւ՝ Զօհրաբեան, *Նախիջեանեան Հիմնահարցը եւ Հայաստանի*, էջ 207:
- ³⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 44, թ. 107:
- ³⁶ Նոյն, գ. 212, թ. 186-188: Բաքուի իշխանութիւնների համաձայնութիւնը նշում է՝ US NA, RG 256, 184.021/309-310/ f. 1, M820 General Records of the American Commission to Negotiate Peace, 1918-1931, American Delegation, Field Mission of the American Delegation, Harbord Military Mission to Armenia, Reel 232. Microfilm publications, Wash., NA and RS, General Services Administration, 1970, պահում է՝ ՀԱԱ, ժ. 4. նաեւ՝ *Армения в Документах Государственного департамента США 1917-1920 гг.*, Сост. и пер. с англ. Г. Г. Махмуриян (Հայաստանը ԱՄՆ Պետֆարտուղարութեան 1917-1920թթ. Փաստաթղթերում, կազմ. եւ անգլ.ից թարգմ.՝ Գ. Գ. Մախմուրեան), Երեւան, Հայաստանի ԳԱԱ Պատմութեան Ինստ., 2012, էջ 260, 262: *Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920թթ. (Քաղաքական Պարմութիւն), Փաստաթղթերի եւ Նիւթերի Ժողովածու*, Երեւան, Գիտութիւն, 2000, էջ 134-135ում, նշում է Հոկտեմբերի 25ը: Առաջին ամսաթուի

- ճշգրտութիւնը հաստատում են ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 5. նաեւ՝ *Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920թթ.*, էջ 139:
- ³⁷ ՀԱԱ, ֆ. Կ. 1021, ց. 2, գ. 964, թ. 129:
- ³⁸ Hovannisian, *The Republic of Armenia*, vol. II, էջ 204-205:
- ³⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 282, թ. 35-36. նաեւ՝ US NA, RG 59, 860J.01/180/Encl. 7, T1192 Records of the Department of State Relating to Internal Affairs of Armenia, 1910-1929, Reel 2, Microfilm publications, Wash., NA and RS, General Services Administration, 1975, ՀԱԱ, ԺԻ 38: Հրատարակուել է՝ *Нагорный Карабах в 1918-1923 гг., Сб. док. и мат.*, под ред. В. А. Микаеляна (Լեոնային Ղարաբաղը 1918-1920թթ: Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, խմբ. Վ. Ա. Միքայէլեան), Երեւան, Հայաստանի ԳԱ, 1992, էջ 352-353. նաեւ՝ *Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920թթ.*, էջ 140-141:
- ⁴⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 389-390, 410. նաեւ՝ *Слово*, 5. 12. 1919. նաեւ՝ Ղուկեան, էջ 120:
- ⁴¹ *Near East News*, Tiflis, 3. 02. 1920, էջ 4:
- ⁴² R. Hovannisian, *The Republic of Armenia*, vol. III, *From London to Sévres, February-August, 1920*, Berkeley & Los Angeles, University of California Press, 1996, էջ 291, 307-308:
- ⁴³ Ռազմական նախարար Էնվերի եղբայր, Իսլամի բանակի հրամանատար Նուրի 1918 Սեպտեմբերին գրաւեց Բաքուն եւ այն յանձնեց անդրկովկասեան Ադրբեջանին:
- ⁴⁴ *Ünüvar*, էջ 8-10, 17:
- ⁴⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 117 եւ գ. 607, թ. 4: 1920 Յուլիսի 1ին Շանթը անստոյգ զեկուցեց իր կառավարութեանը, թէ հայկական բոլոր երեք շրջանները, անխտիր, դիտարկուում էին որպէս վիճելի:
- ⁴⁶ ԱՆՈՒՆՆԵՐԸ *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան*, Հտր. 2, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1988, էջ 210:
- ⁴⁷ Hovannisian, *The Republic of Armenia*, vol. III, էջ 310:
- ⁴⁸ Այժմու Արարատը:
- ⁴⁹ Karabekir, էջ 844-845. նաեւ՝ Բ. Լեգրանի 1920 Սեպտեմբերի 23ի նամակը Չիչերինին ու Լենինին՝ *Геноцид Армян: Ответственность Турции и Обязательства мирового Сообщества, Документы и Комментарии, в 2 т.*, Ред. и сост. Я. Г. Барсегов (Հայերի ցեղասպանութիւն. Թուրքիայի պատասխանատուութիւն եւ համաշխարհային հանրութեան պարտականութիւնները: Վաւերագրեր ու մեկնաբանութիւններ, 2 հատորով, խմբ. եւ կազմ.՝ Եու. Բարսեղով), Հտր. 2, մաս 1, Մոսկուա, Գարդարիկա, 2003, էջ 356:
- ⁵⁰ Յար եւ նման դիտողութիւնը տե՛ս՝ Զօհրաբեան, *Նախիջեւանեան Հիմնահարցը*, էջ 48, 99:
- ⁵¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թ. 70:
- ⁵² *Ünüvar*, էջ 27-30:
- ⁵³ Ինչպէս դա արել է Անդրանիկը 1918 Դեկտեմբերի 2ին Արցախում ու ՀՀ բանակը՝ 1919 Փետրուարի 8ին Նախիջեւանի հիւսիսում, Կանայեանի ջոկատը՝

1920 Մայիսի 27ին Վարանդայում ու Յուլիսի 5ին Գորիսում, նրա հետեւեալ նահանջով հանդերձ:

⁵⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 484, թ. 26-26 դարձ. նաեւ՝ Վրացեան, էջ 445. նաեւ՝ Զօհրաբեան, *Նախիջեւանի Հիմնահարցը (1920-1921)*, էջ 67-68: Դատելով ժամանակագրական տուեալներից՝ խաղաղութեան պայմանները յանձնել են 1920 Յուլիսի 18ին ու 27ին: Վարչապետի՝ ՀՀ խորհրդարանին Օգոստոսի 2ին ներկայացուած զեկուցումը տե՛ս՝ *Հայաստանի Հանրապետութեան Պառլամենտի Նիստերի Արձանագրութիւններ 1918-1920թթ.*, Երեւան, Հայաստանի Ազգային Արխիւ, 2010, էջ 521-522: Մեր տրամադրութեան տակ արխիւային վաւերագրերից աւելի խիստ պայմաններ, այդ թւում երկաթուղու երկայնութեամբ մահմեդական գիւղերը թողնելու պահանջը՝ տե՛ս՝ Hovannisian, *The Republic of Armenia*, vol. III, էջ 314:

⁵⁵ Üzüvar, էջ 31-32:

⁵⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 468, թ. 33-33 դարձ: «Նախիջեւանի Յեղկոմի Յարաբերականը» ՀՀ վարչապետին ուղարկուել է 1920 Օգոստոսի 1ին (տե՛ս նաեւ *Նախիջեւան-Շարուրը 1918-1921թթ.*, էջ 267-268. նաեւ՝ Զօհրաբեան, *Նախիջեւանի Հիմնահարցը*, էջ 96):

⁵⁷ Օսմանեան ճորդ բանակի նախկին հրամանատար եւ 1915-1918՝ հայերի ցեղասպանութիւնը իրականացնելու համար ձեւատրուած երիտթուրքերի յատուկ կազմակերպութեան տնօրինութեան անդամ:

⁵⁸ Üzüvar, էջ 44:

⁵⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 468, թ. 33 եւ գ. 581, թ. 223: Մէջբերման անգլերէն թարգմանութիւնը տե՛ս՝ Hovannisian, *The Republic of Armenia*, vol. III, էջ 318:

⁶⁰ Üzüvar, էջ 37-39, 41:

⁶¹ Խոք գիւղը գտնուում է Երեւան - Նախիջեւան ճանապարհին, Նախիջեւան քաղաքից 28 կմ. հիւսիս-արեւմուտք:

⁶² *Нагорный Карабах*, էջ 574-575:

⁶³ R. Hovannisian, *The Republic of Armenia*, vol. IV *Between Crescent and Sickle: Partition and Sovietization*, Berkeley & Los Angeles, University of California Press, 1996, էջ 161-162:

⁶⁴ Նոյն, էջ 216:

⁶⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 12, թ. 30; գ. 628, թ. 4. նաեւ՝ Hovannisian, *The Republic of Armenia*, vol. IV, էջ 228-229:

⁶⁶ Ալեքսանդրապոլի Պայմանագրի բնագիրը տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 12, թ. 66-67; գ. 602, թ. 438-440: Լոյս է տեսել՝ *Великая Октябрьская Социалистическая Революция и Победа Советской Власти в Армении*, Сб. док., сост. А. Н. Мнацаканян (Հոկտեմբերեան Սոցիալիստական Մեծ Յեղափոխութիւնն ու Խորհրդային Իշխանութեան Յաղթանակը Հայաստանում, Փաստաթղթերի ժողովածու, կազմ.՝ Ա. Ն. Մնացականեան), Երեւան, Հայպետհրատ, 1957, էջ 438-441. նաեւ՝ *Հայաստանը Միջազգային Դիւանագիտութեան եւ Սովետական Արտաքին Քաղաքականութեան Փաստաթղթերում (1828-1923)*, կազմ.՝ Զ. Ս. Կիրակոսեան, Ռ. Գ. Սահակեան, Երեւան, Հայաստան Հրատ., 1972, էջ 683-687: Թուրքերէն բնագիրը՝ *Atatürk'ün Milli Dış Politikası, I: 1919-1923 Millî Mücadele Dönemine Ait 100 Belge* (Աթաթիւրքի ազգային արտաքին

քաղաքանութիւնը, հատ. I, 100 Փաստաթուղթ 1919-1923թթ. ժամանակահատվածի ազգային պայքարի վերաբերեալ), Ankara, Kültür Bakanlığı, 1981, էջ 517-528: Այս տարբերակը անգլերէնով ու մանրամասն հետազոտուած տե՛ս՝ Hovannisian, *The Republic of Armenia*, vol. IV, էջ 394-396:

⁶⁷ Նոյն, էջ 373:

NAKHIDJEVAN IN US STATE DEPARTMENT DOCUMENTS AND THE NATIONAL
ARCHIVES OF ARMENIA (1918-1920)
(Summary)

GAYANE MAKHMOURIAN
ggmakhm@gmail.com

The paper focuses on the basic turning points in the fate of Nakhidjevan Province, which was made part of the Armenian Oblast in 1828. The article, using new archival materials from the US State Department, particularly highlights the battles which led to the destruction of the Armenian villages of the province and the killing of thousands of Armenians as the province changed hands between the Armenians and local Muslims, who outnumbered the native Armenians.

The paper details the involvement of British, Soviet and Turkish forces in the area, the Republic of Armenia, and both the local Muslims and the native Armenians, all trying to grab this strategic piece of land.

Eventually, between 12 and 25 July 1920 the Armenian army moved forth, and the Muslims recognized Sharur-Nakhidjevan as part of the Armenian Republic. However, the entrance of the Red Army into the region on July 28, the unsuccessful Soviet-Armenian negotiations in Moscow and the war launched by Mustafa Kemal against the Republic of Armenia on September 20 blocked the accession of Nakhidjevan to Armenia.